ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2016
02.2016
03.2016
04.2016
05.2016
06.2016
07.2016
08.2016
09.2016
10.2016
Հոկտեմբեր
11.2016
12.2016

# ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 23-րդ տարի

# ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2016

Հոկտեմբեր

թիվ 10 (218)

## Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-139-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

6 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները 2 արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի, «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի, «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ի մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի «Գյումրի 2» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 9 գրավատների, 1 ՓԲԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու և 2 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 143-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրվող վիճակագրության բովանդակությունը, ձևը, տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 23-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

31 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 144-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

35 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 146-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 147-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

37 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 151-Ն որոշումը «2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

43 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 157-Ն որոշումը «Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ը հաստատելու մասին»

58 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 158-Ն որոշումը «Ֆինանսական խմբերի տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և հաշվարկման պարբերականությունը» կանոնակարգ 20/02-ը հաստատելու մասին»

63 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 159-Ն որոշումը «Ֆինանսական խմբերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և դրանց ներկայացման հաճախականությունը» կանոնակարգ 20/03-ը հաստատելու մասին»

136 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 160-Ն որոշումը «Ֆինանսական խմբերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 20/04-ը հաստատելու մասին»

140 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 161-Ն որոշումը «Ֆինանսական խմբերի ռեեստրի վարման կարգը» հաստատելու մասին»

142 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 162-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

144 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 4 պաշտոնական պարզաբանումը «Հրապարակային սակարկությունների գրավի իրացման հետ կապված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ»

146 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ
# ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

*«Ինկասացիայի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]*

***Հոդված 1.*** «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի սեպտեմբերի 28-ի ՀՕ-111-Ն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականը տրվում է անժամկետ:»:

***Հոդված 2.*** Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրված և սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործողության ժամկետը չլրացած որակավորման վկայականները համարվում են անժամկետ տրամադրված:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան***
***12 հոկտեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-139-Ն***

[*] *ՀՀՊՏ 2004 N 59 (358), 03.11.04:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է 2016 թվականի սեպտեմբերի 28-ին (ՀՀՊՏ N 76 (1256), 19.10.16):*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ**
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ**
**ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

**ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ**

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ*

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** 2 արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները (որոշում թիվ 183Ա):
- ***Գրանցվել են*** «Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական, «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Կրեդո Ֆինանս» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության համապատասխանաբար «Կենտրոն», «Երևան», «Շինարարներ», «էրեբունի» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/722Ա, 1/734Ա, 1/738Ա, 1/745Ա):
- ***Թույլատրվել է*** «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրի 2» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/748Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 9 գրավատների, 1 փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 8230000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/728Ա-1/732Ա, 1/751Ա, 1/760Ա, 1/779Ա, 1/780Ա, 1/762Ա) և 2 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/684Ա, 1/761Ա):

*Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրվող վիճակագրության բովանդակությունը, ձևը, տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 23-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**[*]*

***Նպատակ ունենալով*** սահմանել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում առավել ամբողջական վիճակագրության վարման համար անհրաժեշտ ձևեր և կարգ,

***հիմք ընդունելով*** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հաստատել «Փողերի լվացման գործերով նախաքննությունների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել «Փողերի լվացման գործերով դատական քննությունների և դատական ակտերի վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Հաստատել «Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 3-ի:
4. Հաստատել «Ահաբեկչության ֆինանսավորման գործերով նախաքննությունների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 4-ի:
5. Հաստատել «Ահաբեկչության ֆինանսավորման գործերով դատական քննությունների և դատական ակտերի վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 6-ի:
6. Հաստատել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերով իրականացված փաստացի բռնագանձումների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 6-ի:
7. Հաստատել «Ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և նախորդող հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով՝ ստացված իրավական օգնություն ցուցաբերելու մասին բոլոր տեսակի հարցումների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 7-ի:
8. Հաստատել «Ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և նախորդող հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով՝ ուղարկված իրավական օգնություն ցուցաբերելու մասին բոլոր տեսակի հարցումների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 8-ի:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. սեպտեմբերի 13-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.10.2016 թ. (ՀՀՊՏ N21 (564), 17.10.2016):*

9. Հաստատել «Ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և նախորդող հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով՝ գույքի կալանադրումների և բռնագանձումների մասով միջազգային համագործակցության վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 9-ի:
10. Հաստատել «Շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի կազմակերպիչների, աուդիտորական կազմակերպությունների՝ վերահսկողությունների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 10-ի:
11. Հաստատել «Նոտարների վերահսկողության վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 11-ի:
12. Հաստատել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության խախտումների համար իրականացված վարչական վարույթների և պատասխանատվության միջոցների վիճակագրության ձևը»՝ համաձայն Հավելված 12-ի:
13. Հաստատել փողերի լվացմանը նախորդող այն հանցագործությունների ցանկը, որոնց վերաբերյալ սույն որոշմամբ նախատեսված դեպքերում համապատասխան մարմինները պետք է վարեն վիճակագրություն՝ համաձայն Հավելված 13-ի:
14. Հաստատել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վիճակագրության տրամադրման ժամկետները և կարգը»՝ համաձայն Հավելված 14-ի:
15. Հաստատել Հավելվածներ 1-ից 12-ով նախատեսված տվյալների լրացման ուղեցույցը՝ համաձայն Հավելված 15-ի:
16. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրվող վիճակագրության բովանդակությունը, ձևը, տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշումը:
17. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից՝ բացառությամբ սույն որոշման 16-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 21-ից:
18. Սույն որոշման հիման վրա կիսամյակային կտրվածքով տրամադրման ենթակա վիճակագրական տվյալները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ են ներկայացվում 2017 թվականի հուլիսից: Սույն որոշման հիման վրա տարեկան կտրվածքով տրամադրման ենթակա վիճակագրական տվյալները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ են ներկայացվում 2018 թվականի հունվար ամսից:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***16 սեպտեմբերի 2016 թ., N 143-Ն***

*Հավելված 1*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

## Փողերի լվացման գործերով նախաքննությունների վիճակագրության ձև

| | | |
|---|---|---|
| 1 | Հ/Հ | |
| 2 | Նախաքննական գործի համարը | |
| 3 | Քրեական գործի հարուցման ամսաթիվը | |
| 4 | Հանցափորձ | |
| 5 | Մեղադրյալների թիվը | |
| 6 | Քրեական գործի նկարագրությունը | |
| 7 | Քրեական գործն այլ գործից անջատված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործն անջատվել է<br>2) քրեական գործի անջատման որոշման կայացման ամսաթիվը<br>3) այն նախաքննական գործի համարը, որից անջատվել է տվյալ գործը | |
| 8 | Քրեական գործն այլ գործի միացված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործը միացվել է այլ գործի<br>2) քրեական գործերի միացման որոշման կայացման ամսաթիվը<br>3) այն նախաքննական գործ(եր)ի համարը, որին միացվել է տվյալ գործը | |
| 9 | Քրեական հետապնդումը դադարեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը<br>2) Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ կամ 37-րդ հոդվածի համապատասխան դրույթը | |
| 10 | Քրեական հետապնդումը կասեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը<br>2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը<br>3) վարույթի վերսկսման ամսաթիվը | |
| 11 | Միայն փողերի լվացում | |
| 12 | Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունը | |
| 13 | Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունը կատարած անձի կողմից | |
| 14 | Փողերի լվացմանը նախորդող հանցագործության կատարման երկիրը | |
| 15 | Փողերի լվացում հանցավոր համագործակցության կողմից | |
| 16 | Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ սահմանված կալանադրման և հետագայում պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը | |
| 17 | Փաստացի կալանադրված և հետագայում պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը | |

*Հավելված 2*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

## Փողերի լվացման գործերով դատական քննությունների և դատական ակտերի վիճակագրության ձև

| | | |
|---|---|---|
| 1 | Հ/Հ | |
| 2 | Դատական գործի համարը | |
| 3 | Նախաքննական գործի համարը | |
| 4 | Առաջադրված մեղադրանքի նկարագրությունը | |
| 5 | Քրեական հետապնդումը դադարեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը<br>2) ՔԴՕ 35-րդ կամ 37-րդ հոդվածով սահմանված քրեական հետապնդումը բացառող հիմքը | |
| 6 | Քրեական գործով վարույթի կասեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը (կիրառելիության դեպքում)<br>2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը<br>3) վարույթի վերսկսման ամսաթիվը: | |
| 7 | Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը՝ դատավճռի տեսակը կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը | |
| 8 | Այն անձանց թիվը, ում նկատմամբ առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճիռ կամ վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում | |
| 9 | Վերաքննիչ դատարանի դատական ակտը | |
| 10 | Այն անձանց թիվը, ում կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել | |
| 11 | Վճռաբեկ դատարանի դատական ակտը | |
| 12 | Այն անձանց թիվը, ում կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել | |
| 13 | Բռնագանձման նշանակում | |
| 14 | Բռնագանձման ենթակա գույքի ընդհանուր արժեքը, բացակայության դեպքում՝ գույքի տեսակը | |
| 15 | Բռնագանձման ենթակա ՀՀ սահմանով տեղափոխված չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված արժույթի և ըստ ներկայացնողի արժեթղթերի արժեքը | |
| 16 | Փողերի լվացման կատարման երկիրը | |
| 17 | Փողերի լվացում հանցավոր համագործակցության կողմից | |
| 18 | Փողերի լվացումը կատարվել է նախորդող հանցագործությունը կատարած անձի կողմից | |
| 19 | Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունը | |
| 20 | Փողերի լվացմանը նախորդող հանցագործության կատարման երկիրը | |
| 21 | Միայն փողերի լվացում | |

*Հավելված 3*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

## Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների վիճակագրության ձև

| Նախորդող հանցագործությունները ըստ հոդվածների | | Դրանցով նախորդող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի թիվը | Այն գործերի թիվը, որ ուղարկվել է դատարան | Այն գործերի թիվը, որոնցով կայացվել է դատավճիռ | Այն գործերի թիվը, որոնցով կայացվել է դատավճռի կատարումն ապահովող միջոցների կիրառման որոշում | Փաստացի կիրառված ընդհանուր տևողությունը |
|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* |
| 1 | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված | | | | | |
| 2 | ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված | | | | | |
| 3 | ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդված | | | | | |
| 4 | ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդված | | | | | |
| 5 | ՀՀ քրեական օրենսգրքի 132.3-րդ հոդված | | | | | |
| 6 | ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդված | | | | | |
| 7 | ՀՀ քրեական օրենսգրքի 159-րդ հոդված | | | | | |
| 8 | ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդված | | | | | |
| 9 | ՀՀ քրեական օրենսգրքի 172-րդ հոդված | | | | | |
| 10 | ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված | | | | | |
| 11 | ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդված | | | | | |
| 12 | ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված | | | | | |
| 13 | ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված | | | | | |
| 14 | ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդված | | | | | |
| 15 | ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդված | | | | | |
| 16 | ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդված | | | | | |
| 17 | ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդված | | | | | |
| 18 | ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդված | | | | | |
| 19 | ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդված | | | | | |
| 20 | ՀՀ քրեական օրենսգրքի 188.1-րդ հոդված | | | | | |
| 21 | ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդված | | | | | |
| 22 | ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդված | | | | | |
| 23 | ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդված | | | | | |
| 24 | ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդված | | | | | |
| 25 | ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդված | | | | | |
| 26 | ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդված | | | | | |
| 27 | ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդված | | | | | |
| 28 | ՀՀ քրեական օրենսգրքի 197-րդ հոդված | | | | | |
| 29 | ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդված | | | | | |
| 30 | ՀՀ քրեական օրենսգրքի 199-ին հոդված | | | | | |
| 31 | ՀՀ քրեական օրենսգրքի 199.1-րդ հոդված | | | | | |
| 32 | ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդված | | | | | |
| 33 | ՀՀ քրեական օրենսգրքի 201-րդ հոդված | | | | | |
| 34 | ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդված | | | | | |
| 35 | ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդված | | | | | |
| 36 | ՀՀ քրեական օրենսգրքի 204-րդ հոդված | | | | | |
| 37 | ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդված | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 38 | ՀՀ քրեական օրենսգրքի 207-րդ հոդված | | | | | |
| 39 | ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդված | | | | | |
| 40 | ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդված | | | | | |
| 41 | ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդված | | | | | |
| 42 | ՀՀ քրեական օրենսգրքի 212-րդ հոդված | | | | | |
| 43 | ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդված | | | | | |
| 44 | ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդված | | | | | |
| 45 | ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդված | | | | | |
| 46 | ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդված | | | | | |
| 48 | ՀՀ քրեական օրենսգրքի 217.1-րդ հոդված | | | | | |
| 49 | ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդված | | | | | |
| 50 | ՀՀ քրեական օրենսգրքի 220-րդ հոդված | | | | | |
| 51 | ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդված | | | | | |
| 52 | ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդված | | | | | |
| 53 | ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդված | | | | | |
| 54 | ՀՀ քրեական օրենսգրքի 224-րդ հոդված | | | | | |
| 55 | ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդված | | | | | |
| 56 | ՀՀ քրեական օրենսգրքի 234-րդ հոդված | | | | | |
| 57 | ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված | | | | | |
| 58 | ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդված | | | | | |
| 59 | ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդված | | | | | |
| 60 | ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդված | | | | | |
| 61 | ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդված | | | | | |
| 62 | ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդված | | | | | |
| 63 | ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդված | | | | | |
| 64 | ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված | | | | | |
| 65 | ՀՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդված | | | | | |
| 66 | ՀՀ քրեական օրենսգրքի 270-րդ հոդված | | | | | |
| 67 | ՀՀ քրեական օրենսգրքի 275-րդ հոդված | | | | | |
| 68 | ՀՀ քրեական օրենսգրքի 280-րդ հոդված | | | | | |
| 69 | ՀՀ քրեական օրենսգրքի 292-րդ հոդված | | | | | |
| 70 | ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդված | | | | | |
| 71 | ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդված | | | | | |
| 72 | ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված | | | | | |
| 73 | ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդված | | | | | |
| 74 | ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդված | | | | | |
| 75 | ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված | | | | | |
| 76 | ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդված | | | | | |
| 77 | ՀՀ քրեական օրենսգրքի 311.2-րդ հոդված | | | | | |
| 78 | ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված | | | | | |
| 79 | ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդված | | | | | |
| 80 | ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդված | | | | | |
| 81 | ՀՀ քրեական օրենսգրքի 329.1-րդ հոդված | | | | | |
| 82 | ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդված | | | | | |
| 83 | ՀՀ քրեական օրենսգրքի 342.1-րդ հոդված | | | | | |
| 84 | ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդված | | | | | |
| 85 | ՀՀ քրեական օրենսգրքի 345.1-րդ հոդված | | | | | |
| 86 | ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդված | | | | | |
| 87 | ՀՀ քրեական օրենսգրքի 364.1-րդ հոդված | | | | | |
| 88 | ՀՀ քրեական օրենսգրքի 371-րդ հոդված | | | | | |
| 89 | ՀՀ քրեական օրենսգրքի 383-րդ հոդված | | | | | |
| 90 | ՀՀ քրեական օրենսգրքի 388-րդ հոդված | | | | | |
| 91 | ՀՀ քրեական օրենսգրքի 389-րդ հոդված | | | | | |

*Հավելված 4*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

## Ահաբեկչության ֆինանսավորման գործերով նախաքննությունների վիճակագրության ձև

| | | |
|---|---|---|
| 1 | Հ/Հ | |
| 2 | Նախաքննական գործի համարը | |
| 3 | Քրեական գործը հարուցելու ամսաթիվը | |
| 4 | Հանցափորձ | |
| 5 | Մեղադրյալների թիվը | |
| 6 | Քրեական գործի նկարագրությունը | |
| 7 | Քրեական գործն այլ գործից անջատված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործն անջատվել է<br>2) քրեական գործի անջատման որոշման կայացման ամսաթիվը<br>3) այն նախաքննական գործի համարը, որից անջատվել է տվյալ գործը | |
| 8 | Քրեական գործն այլ գործի միացված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործը միացվել է այլ գործի<br>2) քրեական գործերի միացման որոշման կայացման ամսաթիվը<br>3) այն նախաքննական գործ(եր)ի համարը, որին միացվել է տվյալ գործը | |
| 9 | Քրեական հետապնդումը դադարեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը<br>2) Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ կամ 37-րդ հոդվածի համապատասխան դրույթը | |
| 10 | Քրեական հետապնդումը կասեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը<br>2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը<br>3) վարույթի վերսկսման ամսաթիվը | |
| 11 | Ահաբեկչության ֆինանսավորում հանցավոր համագործակցության կողմից | |
| 12 | Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ սահմանված կալանադրման և հետագայում պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը | |
| 13 | Փաստացի կալանադրված և հետագայում պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը | |

*Հավելված 5*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

## Ահաբեկչության ֆինանսավորման գործերով դատական քննությունների և դատական ակտերի վիճակագրության ձև

| | | |
|---|---|---|
| 1 | ՀՀ | |
| 2 | Դատական գործի համարը | |
| 3 | Նախաքննական գործի համարը | |
| 4 | Առաջադրված մեղադրանքի նկարագրությունը | |
| 5 | Քրեական հետապնդումը դադարեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը<br>2) ՔԴՕ 35-րդ կամ 37-րդ հոդվածով սահմանված քրեական հետապնդումը բացառող հիմքը | |
| 6 | Քրեական գործով վարույթի կասեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝<br>1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը (կիրառելիության դեպքում)<br>2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը<br>3) վարույթի վերսկսման ամսաթիվը: | |
| 7 | Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը՝ դատավճռի տեսակը կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը | |
| 8 | Այն անձանց թիվը, ում նկատմամբ առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճիռ կամ վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում | |
| 9 | Վերաքննիչ դատարանի դատական ակտը | |
| 10 | Այն անձանց թիվը, ում կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել | |
| 11 | Վճռաբեկ դատարանի դատական ակտը | |
| 12 | Այն անձանց թիվը, ում կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել | |
| 13 | Բռնագանձման նշանակում | |
| 14 | Բռնագանձման ենթակա գույքի ընդհանուր արժեքը, բացակայության դեպքում՝ գույքի տեսակը | |
| 15 | Բռնագանձման ենթակա ՀՀ սահմանով տեղափոխված չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված արժույթի և ըստ ներկայացնողի արժեթղթերի արժեքը | |
| 16 | Ահաբեկչության ֆինանսավորման կատարման երկիրը | |
| 17 | Ահաբեկչության ֆինանսավորում հանցավոր համագործակցության կողմից | |

*Հավելված 6*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

## Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերով իրականացված փաստացի բռնագանձումների վիճակագրության ձև

| | | |
|---|---|---|
| 1 | ՀՀ | |
| 2 | Դատական գործի համարը | |
| 3 | Փողերի լվացման գործով բռնագանձված գույքի ընդհանուր արժեքը | |
| 4 | Ահաբեկչության ֆինանսավորման գործով բռնագանձված գույքի ընդհանուր արժեքը | |

*Հավելված 7*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

**Ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և նախորդող հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով՝ ստացված իրավական օգնություն ցուցաբերելու մասին բոլոր տեսակի հարցումների վիճակագրության ձև**

| N | Հարցում | Հարցման տեսակը | Փողերի լվացում | Ահաբեկչության ֆինանսավորում | Նախորդող հանցագործություններ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ստացված | 1) հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 2 | կատարված | 1) հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 3 | ընթացքում | 1) հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 4 | մերժված | 1) հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 5 | այլ մարմին ուղարկված | 1) հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 6 | կատարման միջին ժամկետ | 1) հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 7 | մերժման հիմքեր | | | | |
| **Բանկային գաղտնիքի վերաբերյալ հարցումներ** | | | | | |
| 8 | ստացված | 1) որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 2) հաշվի շարժի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 3) հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումներ | | | |
| 9 | կատարված | 1) որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 2) հաշվի շարժի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 3) հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումներ | | | |
| 10 | մերժված | 1) որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 2) հաշվի շարժի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 3) հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումներ | | | |
| 11 | այլ մարմին ուղարկված | 1) որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 2) հաշվի շարժի վերաբերյալ հարցումներ | | | |
| | | 3) հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումներ | | | |

*Հավելված 8*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

**Ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և նախորդող հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով՝ ուղարկված իրավական օգնություն ցուցաբերելու մասին բոլոր տեսակի հարցումների վիճակագրության ձև**

| N | Հարցում | Հարցման տեսակ | Փողերի լվացում | Ահաբեկչության ֆինանսավորում | Նախորդող հանցագործություններ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ուղարկված | 1) Հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) Իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 2 | կատարված | 1) Հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) Իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 3 | ընթացքում | 1) Հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) Իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 4 | մերժված | 1) Հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) Իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 5 | կատարման միջին ժամկետ | 1) Հանձնման վերաբերյալ միջնորդություններ | | | |
| | | 2) Իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդություններ | | | |
| 6 | մերժման հիմքեր | | | | |

*Հավելված 9*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

**Ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և նախորդող հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով՝ գույքի կալանադրումների և բռնագանձումների մասով միջազգային համագործակցության վիճակագրության ձև**

| N | Հարցում | | | Փողերի լվացում | Ահաբեկչության ֆինանսավորում | Նախորդող հանցագործություններ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ստացված | 1) ընդհանուր | ա. ստացված | | | |
| | | | բ. կատարված | | | |
| | | | գ. մերժված | | | |
| | | 2) կատարված հարցումներ | ա. գույքի կալանադրում | | | |
| | | | բ. կալանադրված գույքի արժեք | | | |
| | | | գ. բռնագանձում | | | |
| | | | դ. բռնագանձված գույքի արժեքը | | | |
| | | | ե. կատարման միջին ժամկետ | | | |
| 2 | այլ մարմին ուղարկված գույքի կալանադրումների և բռնագանձումների վերաբերյալ հարցումներ | | | | | |
| 3 | ուղարկված | | | | | |

*Հավելված 10*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

**Շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի կազմակերպիչների, աուդիտորական կազմակերպությունների վերահսկողությունների վիճակագրության ձև**

| Հաշվետու անձինք | Հաշվետու ամսվա միտումը | Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրության խախտումների վերհանման միտումը | Տեղում իրականացված ստուգումների թվաքանակը | Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում ստուգումներից կախման ենթարկված տեղում ստուգումների թվաքանակը | Հարկադրանքի կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը |
|---|---|---|---|---|---|
| | *1* | *2* | *3* | *4* | *5* |
| Շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչներ | | | | | |
| Վիճակախաղերի կազմակերպիչներ | | | | | |
| Աուդիտորական կազմակերպություններ | | | | | |

*Հավելված 11*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

**Նոտարների վերահսկողության վիճակագրության ձև**

| 1. Նոտարների քանակը | 2. Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման էական խախտումներ վեր հանած վերահսկողությունների քանակը | 3. Վերահսկողության ենթարկված նոտարների քանակը |
|---|---|---|
| | | |
| | | |

*Հավելված 12*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության խախտումների համար իրականացված վարչական վարույթների և պատասխանատվության միջոցների վիճակագրության ձև**

| | | |
|---|---|---|
| 1 | Խախտում կատարած անձի անունը (անվանումը) | |
| 2 | Խախտում կատարած անձի գործունեության տեսակը | |
| 3 | Խախտված իրավական նորմի վկայակոչումը | |
| 4 | Վարչական վարույթի կարճված լինելու հանգամանքը, այդ թվում՝ հիմքը | |
| 5 | Վարչական վարույթի կասեցված լինելու հանգամանքը, այդ թվում՝ հիմքը | |
| 6 | Նախազգուշացման կիրառում | |
| 7 | Տուգանքի նշանակում | |
| 8 | Տուգանքի չափը | |
| 9 | Լիցենզիայի կասեցում | |
| 10 | Լիցենզիայի գործունեության դադարեցում | |
| 11 | Պատասխանատվության միջոցների դատական բողոքարկման հանգամանքը | |

*Հավելված 13*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

| N | **Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների ցանկ** |
|---|---|
| 1 | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված |
| 2 | ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված |
| 3 | ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդված |
| 4 | ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդված |
| 5 | ՀՀ քրեական օրենսգրքի 132.3-րդ հոդված |
| 6 | ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդված |
| 7 | ՀՀ քրեական օրենսգրքի 159-րդ հոդված |
| 8 | ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդված |
| 9 | ՀՀ քրեական օրենսգրքի 172-րդ հոդված |
| 10 | ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված |
| 11 | ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդված |
| 12 | ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված |
| 13 | ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված |
| 14 | ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդված |
| 15 | ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդված |
| 16 | ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդված |
| 17 | ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդված |
| 18 | ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդված |
| 19 | ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդված |
| 20 | ՀՀ քրեական օրենսգրքի 188.1-րդ հոդված |
| 21 | ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդված |
| 22 | ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդված |
| 23 | ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդված |
| 24 | ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդված |
| 25 | ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդված |
| 26 | ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդված |
| 27 | ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդված |
| 28 | ՀՀ քրեական օրենսգրքի 197-րդ հոդված |
| 29 | ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդված |

| | |
|---|---|
| 30 | ՀՀ քրեական օրենսգրքի 199-ին հոդված |
| 31 | ՀՀ քրեական օրենսգրքի 199.1-րդ հոդված |
| 32 | ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդված |
| 33 | ՀՀ քրեական օրենսգրքի 201-րդ հոդված |
| 34 | ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդված |
| 35 | ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդված |
| 36 | ՀՀ քրեական օրենսգրքի 204-րդ հոդված |
| 37 | ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդված |
| 38 | ՀՀ քրեական օրենսգրքի 207-րդ հոդված |
| 39 | ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդված |
| 40 | ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդված |
| 41 | ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդված |
| 42 | ՀՀ քրեական օրենսգրքի 212-րդ հոդված |
| 43 | ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդված |
| 44 | ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդված |
| 45 | ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդված |
| 46 | ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդված |
| 48 | ՀՀ քրեական օրենսգրքի 217.1-րդ հոդված |
| 49 | ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդված |
| 50 | ՀՀ քրեական օրենսգրքի 220-րդ հոդված |
| 51 | ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդված |
| 52 | ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդված |
| 53 | ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդված |
| 54 | ՀՀ քրեական օրենսգրքի 224-րդ հոդված |
| 55 | ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդված |
| 56 | ՀՀ քրեական օրենսգրքի 234-րդ հոդված |
| 57 | ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված |
| 58 | ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդված |
| 59 | ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդված |
| 60 | ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդված |
| 61 | ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդված |
| 62 | ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդված |
| 63 | ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդված |
| 64 | ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված |
| 65 | ՀՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդված |
| 66 | ՀՀ քրեական օրենսգրքի 270-րդ հոդված |
| 67 | ՀՀ քրեական օրենսգրքի 275-րդ հոդված |
| 68 | ՀՀ քրեական օրենսգրքի 280-րդ հոդված |
| 69 | ՀՀ քրեական օրենսգրքի 292-րդ հոդված |
| 70 | ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդված |
| 71 | ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդված |
| 72 | ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված |
| 73 | ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդված |
| 74 | ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդված |
| 75 | ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված |
| 76 | ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդված |
| 77 | ՀՀ քրեական օրենսգրքի 311.2-րդ հոդված |
| 78 | ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված |
| 79 | ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդված |
| 80 | ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդված |
| 81 | ՀՀ քրեական օրենսգրքի 329.1-րդ հոդված |
| 82 | ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդված |
| 83 | ՀՀ քրեական օրենսգրքի 342.1-րդ հոդված |
| 84 | ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդված |
| 85 | ՀՀ քրեական օրենսգրքի 345.1-րդ հոդված |
| 86 | ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդված |
| 87 | ՀՀ քրեական օրենսգրքի 364.1-րդ հոդված |
| 88 | ՀՀ քրեական օրենսգրքի 371-րդ հոդված |
| 89 | ՀՀ քրեական օրենսգրքի 383-րդ հոդված |
| 90 | ՀՀ քրեական օրենսգրքի 388-րդ հոդված |
| 91 | ՀՀ քրեական օրենսգրքի 389-րդ հոդված |

*Հավելված 14*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

1. Հավելված 1-ով և 4-ով նախատեսված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կողմից կիսամյակային կտրվածքով՝ մինչև հունվարի 15-ը և հուլիսի 15-ը:

2. Հավելված 2-ով և 5-ով նախատեսված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից տարեկան մեկ անգամ՝ մինչև փետրվարի 15-ը:

3. Հավելված 6-ով և Հավելված 3-ի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից տարեկան մեկ անգամ՝ մինչև հունվարի 15-ը:

4. Հավելված 3-ի 1-3-րդ կետերով նախատեսված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից տարեկան մեկ անգամ՝ մինչև փետրվարի 15-ը:

5. Հավելված 7-ով, 8-ով և 9-ով նախատեսված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տարեկան մեկ անգամ՝ մինչև փետրվարի 15-ը:

6. Հավելված 10-ով նախատեսված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կիսամյակային կտրվածքով՝ մինչև փետրվարի 15-ը և հուլիսի 15-ը:

7. Հավելված 11-ով նախատեսված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից կիսամյակային կտրվածքով՝ մինչև փետրվարի 15-ը և հուլիսի 15-ը:

8. Հավելված 12-ով նախատեսված վիճակագրությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կիսամյակային կտրվածքով՝ մինչև փետրվարի 15-ը և հուլիսի 15-ը:

9. Վիճակագրությունը տրամադրվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ ըստ համաձայնեցված ձևաչափի:

10. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում տրամադրվում է տվյալ ժամանակահատվածում սկսված նախաքննություններով, վարույթներով, կայացված դատավճիռներով, ստացված և ուղարկված հարցումներով վիճակագրություն: Վիճակագրությունը տրամադրելու պահին չավարտված նախաքննությունների և այլ վարույթների վերաբերյալ տրամադրվում են առկա տվյալները, իսկ վարույթի ավարտին հաջորդող առաջին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվում են նոր առաջացած հանգամանքների վերաբերյալ տվյալները:

11. Հաշվետու ժամանակաշրջանում վիճակագրական տվյալների բացակայության դեպքում համապատասխան պատասխանատու մարմինը նամակագրության միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տեղյակ է պահում այդ մասին:

*Հավելված 15*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ*

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 1-ԻՑ 12-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

### Գլուխ 1

1. Հավելված 1-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ներկայացվող փողերի լվացման հոդվածով/հանցակազմով գործի հերթական համարը:

2. Հավելված 1-ի 2-րդ կետում լրացվում է նախաքննական գործի համարը: Այն դեպքերում, երբ տվյալ գործի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ներկայացվում հետագայում՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշման Հավելված 14-ի 10-րդ կետի համաձայն, ապա նախաքննական գործի համարը լրացվում է նաև այդ դեպքում:

3. Հավելված 1-ի 3-րդ կետում լրացվում է քրեական գործի հարուցման ամսաթիվը:

4. Հավելված 1-ի 4-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

5. Հավելված 1-ի 5-րդ կետում լրացվում է քրեական գործում ներգրավված մեղադրյալների թիվը:

6. Հավելված 1-ի 6-րդ կետում լրացվում է քրեական գործի համառոտ նկարագրությունը՝ նվազագույնը ներառելով տեղեկություններ փողերի լվացման մեջ ներգրավված անձանց, արարքի կատարման ժամանակի, վայրի, արարքի նկարագրության մասին՝ նշելով փողերի լվացման կատարման եղանակը (փոխարկման կամ փոխանցման եղանակով, գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելու կամ խեղաթյուրելու եղանակով, գույք ձեռք բերելու կամ տիրապետելու կամ օգտագործելու կամ տնօրինելու եղանակով):

7. Հավելված 1-ի 7-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործը անջատվել է,
2) քրեական գործի անջատման որոշման կայացման ամսաթիվը,
3) այն նախաքննական գործի համարը, որից անջատվել է տվյալ գործը:

8. Հավելված 1-ի 8-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործը միացվել է այլ գործի (առկայության դեպքում),
2) քրեական գործերի միացման որոշման կայացման ամսաթիվը,
3) այն նախաքննական գործ(եր)ի համարը, որին միացվել է տվյալ գործը:

9. Հավելված 1-ի 9-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ կամ 37-րդ հոդվածի համապատասխան դրույթը:

10. Հավելված 1-ի 10-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը,
3) վարույթի վերսկսման ամսաթիվը:

11. Հավելված 1-ի 11-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե փողերի լվացման տվյալ գործով վարույթն իրականացվում է առանց նախորդող հանցագործության համար դատավճռի առկայության կամ նախորդող հանցագործության համար զուգահեռ քրեական հետապնդման:

12. Հավելված 1-ի 12-րդ կետում առկայության դեպքում լրացվում է Քրեական օրենսգրքի այն հոդվածի համարը, որով նախատեսված է փողերի լվացմանը նախորդող հանցագործությունը:

13. Հավելված 1-ի 13-րդ կետում լրացնել «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

14. Հավելված 1-ի 14-րդ կետում լրացնել նախորդող հանցագործության կատարման պետությունը (տարածքը):

15. Հավելված 1-ի 15-րդ կետում լրացնել «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ ելնելով այն հանգամանքից, թե փողերի լվացումը կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հանցավոր համագործակցության կողմից, թե՝ ոչ:

16. Հավելված 1-ի 16-րդ կետում լրացնել վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նշված կալանադրման և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի հիման վրա պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը ՀՀ դրամով:

17. Հավելված 1-ի 17-րդ կետում լրացնել վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա փաստացի կալանադրված և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի հիման վրա պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը ՀՀ դրամով:

**Գլուխ 2**

18. Հավելված 2-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ներկայացվող փողերի լվացման դատական գործի հերթական համարը:

19. Հավելված 2-ի 2-րդ կետում լրացվում է տվյալ դատական գործի համարը:

20. Հավելված 2-ի 3-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում կայացված դատավճռում ընդգրկված նախաքննական գործի համարը: Այն դեպքերում, երբ տվյալ գործի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ներկայացվում հետագայում՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշման Հավելված 14-ի 10-րդ կետի համաձայն, ապա նախաքննական գործի համարը լրացվում է նաև այդ դեպքում:

21. Հավելված 2-ի 4-րդ կետում լրացվում է առաջադրված մեղադրանքի նկարագրությունը՝ նվազագույնը ներառելով տեղեկություններ փողերի լվացման մեջ ներգրավված անձանց, արարքի կատարման ժամանակի, վայրի, արարքի նկարագրության մասին՝ նշելով փողերի լվացման կատարման եղանակը (փոխարկման կամ փոխանցման եղանակով, գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելու կամ խեղաթյուրելու եղանակով, գույք ձեռք բերելու կամ տիրապետելու կամ օգտագործելու կամ տնօրինելու եղանակով):

22. Հավելված 2-ի 5-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ կամ 37-րդ հոդվածի համապատասխան դրույթը:

23. Հավելված 2-ի 6-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը,
3) վարույթի վերսկսման ամսաթիվը այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանում դատական ակտ կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում չի կայացվել:

24. Հավելված 2-ի 7-րդ կետում լրացվում է մեղադրական կամ արդարացման դատավճիռ կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

25. Հավելված 2-ի 8-րդ կետում նշվում է այն անձանց թիվը, ում նկատմամբ առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճիռ կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

26. Հավելված 2-ի 9-րդ կետում առկայության դեպքում լրացվում է վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերի հետևյալ տեսակներից որևէ մեկը՝

1) մերժել վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով ուժի մեջ,
2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը,
3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և այդ մասով հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը,
4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել և փոփոխել ստորադաս դատական ակտը,
5) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը կամ առանց քննության թողնել քաղաքացիական հայցը:

27. Հավելված 2-ի 10-րդ կետում լրացվում է այն անձանց թիվը, ում կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել:

28. Հավելված 2-ի 11-րդ կետում առկայության դեպքում լրացվում է վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտերի հետևյալ տեսակներից որևէ մեկը՝

1) մերժել վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով ուժի մեջ,
2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը,

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և այդ մասով հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը,
4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել և փոփոխել ստորադաս դատական ակտը,
5) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը կամ առանց քննության թողնել քաղաքացիական հայցը,
6) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել վերաքննիչ դատարանի դատական ակտը:

29. Հավելված 2-ի 12-րդ կետում լրացվում է այն անձանց թիվը, ում կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել:

30. Հավելված 2-ի 13-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե առաջին ատյանի դատարանը կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածը, թե՝ ոչ:

31. Հավելված 2-ի 14-րդ կետում լրացվում է ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված և դատարանի կողմից նշանակված բռնագանձման ենթակա գույքի ընդհանուր արժեքը՝ հիմք ընդունելով դատավճիռը: Բռնագանձման ենթակա գույքի արժեքի բացակայության դեպքում լրացվում է գույքի տեսակը:

32. Հավելված 2-ի 15-րդ կետում լրացվում է ՀՀ սահմանով տեղափոխված չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված արժույթի և ըստ ներկայացնողի արժեթղթերի արժեքը ՀՀ դրամով:

33. Հավելված 2-ի 16-րդ կետում լրացվում է փողերի լվացման կատարման պետությունը (տարածքը):

34. Հավելված 2-ի 17-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ ելնելով այն հանգամանքից, թե փողերի լվացումը կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հանցավոր համագործակցության կողմից, թե՝ ոչ:

35. Հավելված 2-ի 18-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

36. Հավելված 2-ի 19-րդ կետում առկայության դեպքում լրացվում է Քրեական օրենսգրքի այն հոդվածի համարը, որով նախատեսված է փողերի լվացմանը նախորդող հանցագործությունը:

37. Հավելված 2-ի 20-րդ կետում լրացվում է նախորդող հանցագործության կատարման պետությունը (տարածքը):

38. Հավելված 2-ի 21-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե փողերի լվացման տվյալ գործով դատավճիռ կայացվել է առանց նախորդող հանցագործության համար միաժամանակյա կամ նախորդ դատավճռի առկայության, թե՝ ոչ:

### Գլուխ 3

39. Հավելված 3-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված հանցագործությունների թիվը՝ ըստ Հավելված 3-ում նախատեսված հանցագործությունների:

40. Հավելված 3-ի 2-րդ կետում լրացվում է այն անձանց թիվը, ում վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում կայացվել է դատավճիռ՝ ըստ Հավելված 3-ում նախատեսված հանցագործությունների:

41. Հավելված 3-ի 3-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում կայացված դատավճիռների թիվը՝ ըստ Հավելված 3-ում նախատեսված հանցագործությունների:

42. Հավելված 3-ի 4-րդ կետում լրացվում է այն գործերի թիվը, որոնցով հաշվետու ժամանակահատվածում կայացված դատավճիռներով փաստացի կատարվել է բռնագանձում՝ ըստ Հավելված 3-ում նախատեսված հանցագործությունների:

43. Հավելված 3-ի 5-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում կայացված դատավճիռների հիման վրա փաստացի բռնագանձված գույքի արժեքը՝ ըստ Հավելված 3-ում նախատեսված հանցագործությունների:

### Գլուխ 4

44. Հավելված 4-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ներկայացվող ահաբեկչության ֆինանսավորման գործի հերթական համարը:

45. Հավելված 4-ի 2-րդ կետում լրացվում է նախաքննական գործի համարը: Այն դեպքերում, երբ տվյալ գործի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ներկայացվում հետագայում՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշման Հավելված 14-ի 10-րդ կետի համաձայն, ապա նախաքննական գործի համարը լրացվում է նաև այդ դեպքում:

46. Հավելված 4-ի 3-րդ կետում լրացվում է քրեական գործի հարուցման ամսաթիվը:

47. Հավելված 4-ի 4-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

48. Հավելված 4-ի 5-րդ կետում լրացվում է քրեական գործում ներգրավված մեղադրյալների թիվը:

49. Հավելված 4-ի 6-րդ կետում լրացվում է քրեական գործի համառոտ նկարագրությունը՝ նվազագույնը ներառելով տեղեկություններ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավված անձանց, արարքի կատարման ժամանակի, վայրի, արարքի նկարագրության մասին:

50. Հավելված 4-ի 7-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործը անջատվել է,
2) քրեական գործի անջատման որոշման կայացման ամսաթիվը,
3) այն նախաքննական գործի համարը, որից անջատվել է տվյալ գործը:

51. Հավելված 4-ի 8-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն մեղադրյալ(ներ)ի անունը և ազգանունը, ում մասով քրեական գործը միացվել է այլ գործի (առկայության դեպքում),
2) քրեական գործերի միացման որոշման կայացման ամսաթիվը,
3) այն նախաքննական գործ(եր)ի համարը, որին միացվել է տվյալ գործը:

52. Հավելված 4-ի 9-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ կամ 37-րդ հոդվածի համապատասխան դրույթը:

53. Հավելված 4-ի 10-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը,
3) վարույթի վերսկսման ամսաթիվը:

54. Հավելված 4-ի 11-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ ելնելով այն հանգամանքից, թե ահաբեկչության ֆինանսավորումը կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հանցավոր համագործակցության կողմից, թե՝ ոչ:

55. Հավելված 4-ի 12-րդ կետում լրացնել վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նշված կալանադրման և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի հիման վրա պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը ՀՀ դրամով:

56. Հավելված 4-ի 13-րդ կետում լրացնել վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա փաստացի կալանադրված և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի հիման վրա պարտադիր բռնագանձման ենթակա գույքի արժեքը ՀՀ դրամով:

## Գլուխ 5

57. Հավելված 5-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ներկայացվող ահաբեկչության ֆինանսավորման դատական գործի հերթական համարը:

58. Հավելված 5-ի 2-րդ կետում լրացվում է տվյալ դատական գործի համարը:

59. Հավելված 5-ի 3-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում կայացված դատավճռում ընդգրկված նախաքննական գործի համարը: Այն դեպքերում, երբ տվյալ գործի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ներկայացվում հետագայում՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշման Հավելված 14-ի 10-րդ կետի համաձայն, ապա նախաքննական գործի համարը լրացվում է:

60. Հավելված 5-ի 4-րդ կետում լրացվում է առաջադրված մեղադրանքի նկարագրությունը՝ նվազագույնը ներառելով տեղեկություններ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավված անձանց, արարքի կատարման ժամանակի, վայրի, արարքի նկարագրության վերաբերյալ:

61. Հավելված 5-ի 5-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում մասով դադարեցվել է քրեական հետապնդումը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ կամ 37-րդ հոդվածի համապատասխան դրույթը:

62. Հավելված 5-ի 6-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: «Այո» պատասխանը նշելու դեպքում նշվում են նաև՝

1) այն անձի(անց) անունը և ազգանունը, ում նկատմամբ կասեցվել է գործը (կիրառելիության դեպքում),
2) Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համապատասխան դրույթը,
3) վարույթի վերսկսման ամսաթիվը այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանում դատական ակտ կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում չի կայացվել:

63. Հավելված 5-ի 7-րդ կետում լրացվում է մեղադրական կամ արդարացման դատավճիռ կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը:

64. Հավելված 5-ի 8-րդ կետում նշվում է այն անձանց թիվը, ում նկատմամբ առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճիռ կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը:

65. Հավելված 5-ի 9-րդ կետում, առկայության դեպքում, լրացվում է վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերի հետևյալ տեսակներից որևէ մեկը՝

1) մերժել վերաքննիչ բողոքը դատական ակտը թողնելով ուժի մեջ,
2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը,
3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և այդ մասով հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը,
4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել և փոփոխել ստորադաս դատական ակտը,
5) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը կամ առանց քննության թողնել քաղաքացիական հայցը:

66. Հավելված 5-ի 10-րդ կետում լրացվում է այն անձանց թիվը, ում կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել:

67. Հավելված 5-ի 11-րդ կետում, առկայության դեպքում, լրացվում է վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտերի հետևյալ տեսակներից որևէ մեկը՝

1) մերժել վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով ուժի մեջ,
2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը,
3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և այդ մասով հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը,
4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել և փոփոխել ստորադաս դատական ակտը,
5) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը, կամ առանց քննության թողնել քաղաքացիական հայցը,
6) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել վերաքննիչ դատարանի դատական ակտը:

68. Հավելված 5-ի 12-րդ կետում լրացվում է այն անձանց թիվը, ում կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել:

69. Հավելված 5-ի 13-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե առաջին ատյանի դատարանը կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածը, թե՝ ոչ:

70. Հավելված 5-ի 14-րդ կետում լրացվում է ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված և դատարանի կողմից նշանակված բռնագանձման ենթակա գույքի ընդհանուր արժեքը՝ հիմք ընդունելով դատավճիռը: Բռնագանձման ենթակա գույքի արժեքի բացակայության դեպքում լրացվում է գույքի տեսակը:

71. Հավելված 5-ի 15-րդ կետում լրացվում է բռնագանձման ենթակա՝ ՀՀ սահմանով տեղափոխված չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված արժույթի և ըստ ներկայացնողի արժեթղթերի արժեքը ՀՀ դրամով:

72. Հավելված 5-ի 16-րդ կետում լրացվում է ահաբեկչության ֆինանսավորման կատարման պետությունը (տարածքը):

73. Հավելված 5-ի 17-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը՝ ելնելով այն հանգամանքից, թե ահաբեկչության ֆինանսավորումը կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հանցավոր համագործակցության կողմից, թե՝ ոչ:

**Գլուխ 6**

74. Հավելված 6-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ներկայացվող փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման գործով բռնագանձման վարույթի հերթական համարը:

75. Հավելված 6-ի 2-րդ կետում լրացվում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դատական գործի համարը: Այն դեպքերում, երբ տվյալ գործի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ներկայացվում հետագայում՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թ. սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշման Հավելված 14-ի 10-րդ կետի համաձայն, ապա դատական գործի համարը լրացվում է նաև այդ դեպքում:

76. Հավելված 6-ի 3-րդ կետը լրացվում է այն դեպքում, երբ ներկայացվում են փողերի լվացման գործով կատարված փաստացի բռնագանձման վերաբերյալ տվյալներ: Հավելված 6-ի 3-րդ կետում լրացվում է ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի հիման վրա փաստացի բռնագանձված գույքի ընդհանուր արժեքը: Հնարավորության դեպքում նաև լրացնել՝

1) փաստացի բռնագանձված՝ փողերի լվացման կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքի, ինչպես նաև այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների արժեքը ՀՀ դրամով,

2) փաստացի բռնագանձված՝ փողերի լվացման կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների արժեքը ՀՀ դրամով,
3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գույքի չհայտնաբերման դեպքում փաստացի բռնագանձված այլ գույքի արժեքը ՀՀ դրամով,
4) փաստացի բռնագանձված՝ ՀՀ սահմանով տեղափոխված չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված արժույթի և ըստ ներկայացնողի արժեթղթերի արժեքը:

77. Հավելված 6-ի 4-րդ կետը լրացվում է այն դեպքում, երբ ներկայացվում են ահաբեկչության ֆինանսավորման գործով կատարված փաստացի բռնագանձման վերաբերյալ տվյալներ: Հավելված 6-ի 4-րդ կետում լրացվում է ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի հիման վրա փաստացի բռնագանձված գույքի ընդհանուր արժեքը: Հնարավորության դեպքում նաև լրացնել՝

1) փաստացի բռնագանձված՝ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի արժեքը ՀՀ դրամով,
2) փաստացի բռնագանձված՝ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների արժեքը ՀՀ դրամով,
3) փաստացի բռնագանձված՝ ահաբեկչության ֆինանսավորման կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների արժեքը ՀՀ դրամով,
4) սույն կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում փաստացի բռնագանձված համարժեք գույքի արժեքը ՀՀ դրամով,
5) փաստացի բռնագանձված՝ ՀՀ սահմանով տեղափոխված չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված արժույթի և ըստ ներկայացնողի արժեթղթերի արժեքը:

## Գլուխ 7

78. Հավելված 7-ի 1-ին կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ստացված միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշման Հավելված 13-ում (այսուհետ՝ Հավելված 13) նախատեսված հանցագործությունների:

79. Հավելված 7-ի 1-ին կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

80. Հավելված 7-ի 2-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ստացված և կատարված միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

81. Հավելված 7-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում ստացված և կատարված իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունները՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

82. Հավելված 7-ի 3-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ստացված և քննարկման ընթացքում գտնվող միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

83. Հավելված 7-ի 3-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և քննարկման ընթացքում գտնվող իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

84. Հավելված 7-ի 4-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ստացված և մերժված միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

85. Հավելված 7-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և մերժված իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

86. Հավելված 7-ի 5-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հանձնման վերաբերյալ ստացված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավասու մարմնին ուղարկված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

87. Հավելված 7-ի 5-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ ստացված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավասու մարմնին ուղարկված միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

88. Հավելված 7-ի 6-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված հանձնման վերաբերյալ միջնորդությունների կատարման միջին տևողությունը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների: Կատարման միջին տևողությունը հաշվելու համար անհրաժեշտ է գումարել բոլոր այդպիսի միջնորդությունների կատարման համար պահանջված ժամկետները և բաժանել կատարված միջնորդությունների թվի վրա:

89. Հավելված 7-ի 6-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ ստացված միջնորդությունների կատարման միջին տևողությունը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների: Կատարման միջին տևողությունը հաշվելու համար անհրաժեշտ է գումարել բոլոր այդպիսի միջնորդությունների կատարման համար պահանջված ժամկետները և բաժանել կատարված միջնորդությունների թվի վրա:

90. Հավելված 7-ի 7-րդ կետում թվարկվում են և՛ հանձնման, և՛ իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ միջնորդությունների մերժման համար կիրառված հիմքերը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների՝ սկսելով առավել հաճախ կիրառվածներից և ավարտելով ամենահազվադեպ կիրառված հիմքերով:

91. Հավելված 7-ի 8-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

92. Հավելված 7-ի 8-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված հաշվի շարժի վերաբերյալ հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

93. Հավելված 7-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

94. Հավելված 7-ի 9-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ կատարված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

95. Հավելված 7-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և կատարված հաշվի շարժի վերաբերյալ հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

96. Հավելված 7-ի 9-րդ կետի 3-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և կատարված հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

97. Հավելված 7-ի 10-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և մերժված որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ կատարված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

98. Հավելված 7-ի 10-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և մերժված հաշվի շարժի վերաբերյալ հարցումների քանակը:

99. Հավելված 7-ի 10-րդ կետի 3-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և մերժված հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումների քանակը:

100. Հավելված 7-ի 11-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավասու մարմնին ուղարկված որևէ անձի՝ հաշվետեր կամ իրական շահառու լինելու փաստի վերաբերյալ կատարված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

101. Հավելված 7-ի 11-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավասու մարմնին ուղարկված հաշվի շարժի վերաբերյալ հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

102. Հավելված 7-ի 11-րդ կետի 3-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված

իրավասու մարմնին ուղարկված հաշվի մոնիթորինգ իրականացնելու և արդյունքները տրամադրելու վերաբերյալ հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

**Գլուխ 8**

103. Հավելված 8-ի 1-ին կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ուղարկված միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

104. Հավելված 8-ի 1-ին կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ուղարկված իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

105. Հավելված 8-ի 2-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ուղարկված և կատարված միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

106. Հավելված 8-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ուղարկված և կատարված իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունները՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

107. Հավելված 8-ի 3-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ուղարկված և քննարկման ընթացքում գտնվող միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

108. Հավելված 8-ի 3-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ ուղարկված և քննարկման ընթացքում գտնվող միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

109. Հավելված 8-ի 4-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնման վերաբերյալ ուղարկված և մերժված միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

110. Հավելված 8-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ուղարկված և մերժված իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

111. Հավելված 8-ի 5-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ուղարկված հանձնման վերաբերյալ միջնորդությունների կատարման միջին տևողությունը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների: Կատարման միջին տևողությունը հաշվելու համար անհրաժեշտ է գումարել բոլոր այդպիսի միջնորդությունների կատարման համար պահանջված ժամկետները և բաժանել կատարված միջնորդությունների թվի վրա:

112. Հավելված 8-ի 5-րդ կետի 2-րդ ենթակետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ միջնորդությունների կատարման միջին տևողությունը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների: Կատարման միջին տևողությունը հաշվելու համար անհրաժեշտ է գումարել բոլոր այդպիսի միջնորդությունների կատարման համար պահանջված ժամկետները և բաժանել կատարված միջնորդությունների թվի վրա:

113. Հավելված 8-ի 6-րդ կետում թվարկվում են և՛ հանձնման, և՛ իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ ուղարկված միջնորդությունների մերժման համար կիրառված հիմքերը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների՝ սկսելով առավել հաճախ կիրառվածներից և ավարտելով ամենահազվադեպ կիրառված հիմքերով:

**Գլուխ 9**

114. Հավելված 9-ի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում լրացվում է գույքի կալանադրումների և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված գույքի բռնագանձումների վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում ստացված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

115. Հավելված 9-ի 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում լրացվում է գույքի կալանադրումների և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված գույքի բռնագանձումների վե-

րաբերյալ հաշվետու ժամանակահատվածում ստացված և կատարված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

116. Հավելված 9-ի 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում լրացվում է գույքի կալանադրումների և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված գույքի բռնագանձումների վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում ստացված և մերժված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

117. Հավելված 9-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում լրացվում է գույքի կալանադրումների վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում ստացված և կատարված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

118. Հավելված 9-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված հարցումների հիման վրա կալանադրված գույքի արժեքը ՀՀ դրամով՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

119. Հավելված 9-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և կատարված ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված բռնագանձումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

120. Հավելված 9-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությունում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված հարցումների հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի համաձայն բռնագանձված գույքի արժեքը ՀՀ դրամով՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

121. Հավելված 9-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված գույքի կալանադրումների և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված բռնագանձումների վերաբերյալ հարցումների կատարման միջին տևողությունը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների: Կատարման միջին տևողությունը հաշվելու համար անհրաժեշտ է գումարել հաշվետու ժամանակահատվածում գույքի կալանադրումների և բռնագանձումների վերաբերյալ ստացված հարցումների կատարման համար պահանջված ժամկետները և բաժանել կատարված հարցումների թվի վրա:

122. Հավելված 9-ի 2-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում ստացված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավասու մարմնին ուղարկված գույքի կալանադրումների և բռնագանձումների վերաբերյալ հարցումների քանակը:

123. Հավելված 9-ի 3-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածում գույքի կալանադրումների և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով նախատեսված բռնագանձումների վերաբերյալ ուղարկված հարցումների քանակը՝ ըստ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և Հավելված 13-ում նախատեսված հանցագործությունների:

**Գլուխ 10**

124. Հավելված 10-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակահատվածի ավարտի պահին առկա հաշվետու անձանց քանակը՝ ըստ շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների, վիճակախաղերի կազմակերպիչների, ինչպես նաև ըստ աուդիտորական կազմակերպությունների:

125. Հավելված 10-ի 2-րդ կետում լրացվում է նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարի չափով տուգանքի նշանակման հանգեցրած վերահսկողությունների քանակը՝ ըստ շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների, վիճակախաղերի կազմակերպիչների, ինչպես նաև ըստ աուդիտորական կազմակերպությունների:

126. Հավելված 10-ի 3-րդ կետում լրացվում է տեղերում իրականացված ընդհանուր ստուգումների քանակը՝ ըստ շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների, վիճակախաղերի կազմակերպիչների, ինչպես նաև ըստ աուդիտորական կազմակերպությունների:

127. Հավելված 10-ի 4-րդ կետում լրացվում է միայն փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման տեսանկյունից իրականացված ստուգումների քանակը՝ ըստ շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների, վիճակախաղերի կազմակերպիչների, ինչպես նաև ըստ աուդիտորական կազմակերպությունների:

128. Հավելված 10-ի 5-րդ կետում լրացվում է ընդհանուր և փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից իրականացված ստուգումների քանակը՝ ըստ շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների, վիճակախաղերի կազմակերպիչների, ինչպես նաև ըստ աուդիտորական կազմակերպությունների:

## Գլուխ 11

129. Հավելված 11-ի 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ավարտի պահին առկա նոտարների քանակը:

130. Հավելված 11-ի 2-րդ կետում լրացվում է նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարի չափով տուգանքի նշանակման հանգեցրած վերահսկողությունների քանակը:

131. Հավելված 11-ի 3-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողության ենթարկված նոտարների քանակը:

## Գլուխ 12

132. Հավելված 12-ի 1-ին կետում լրացվում է խախտում կատարած անձի անունը կամ անվանումը՝ կախված հաշվետվություն ներկայացնող անձի տեսակից (նոտարներ, շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչ, վիճակախաղերի կազմակերպիչ, աուդիտորական կազմակերպություններ):

133. Հավելված 12-ի 2-րդ կետում լրացվում է խախտում կատարած անձի գործունեության տեսակը՝ նոտարական, շահումով խաղերի և խաղատների կազմակերպչի կամ վիճակախաղերի կազմակերպչի, աուդիտորական գործունեություն:

134. Հավելված 12-ի 3-րդ կետում լրացվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության համապատասխան իրավանորմը, որը խախտվել է հաշվետու անձի կողմից:

135. Հավելված 12-ի 4-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: Եթե նշվում է «Այո» պատասխանը, ապա պետք է լրացնել նաև օրենքի այն դրույթը, որի հիման վրա կարճվել է վարույթը:

136. Հավելված 12-ի 5-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը: Եթե նշվում է «Այո» պատասխանը, ապա պետք է լրացնել նաև օրենքի այն դրույթը, որի հիման վրա կասեցվել է վարույթը:

137. Հավելված 12-ի 6-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

138. Հավելված 12-ի 7-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

139. Հավելված 12-ի 8-րդ կետում առկայության դեպքում նշվում է նշանակված տուգանքի չափը:

140. Հավելված 12-ի 9-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

141. Հավելված 12-ի 10-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

142. Հավելված 12-ի 11-րդ կետում նշվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանը:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*[*]

***Հիմք ընդունելով*** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածները, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 20-րդ, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը, հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները հաստատելու մասին» թիվ 20-Ն որոշման Հավելված 1-ը և Հավելված 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելվածի 1-ի և Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***16 սեպտեմբերի 2016 թ., N 144-Ն***

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. սեպտեմբերի 13-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.10.2016 թ. (ՀՀԳՏ N21 (564), 17.10.2016):*

*Հավելված 1*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 144-Ն որոշմամբ*

*Հավելված 1*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշման*

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N
## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1. Ես՝ _____ս, հանդիսանալով _____
*(անուն, հայրանուն, ազգանուն)* *(անվանումը)*

իրավաբանական անձի _____ հայտարարում եմ, որ նշված իրավաբանական
*(կարգավիճակը)*

անձի իրական շահառու է հանդիսանում _____:
*(անուն, հայրանուն, ազգանուն)*

ա) _____
*ծննդյան ամսաթիվ (օր, ամիս, տարի)*
*(լրացնել առկայության դեպքում)*

գ) _____
*քաղաքացիություն*
*(լրացնել առկայության դեպքում)*

բ) _____
*բնակության վայր (երկիր, քաղաք, փողոց, շենք, տուն/բնակարան)*
*(լրացնել առկայության դեպքում)*

դ) _____
*անձնագրի սերիան/համարը, տրամադրման ամսաթիվը*
*(տես սույն հայտարարության ներկայացման կարգի և ժամկետների 7-րդ կետը)*

2. Սույն հայտարարության 1-ին կետում նշված անձը իրավաբանական անձի իրական շահառու է հանդիսանում հետևյալ հիմք(եր)ից որևէ մեկով՝

- ☐ իրականում գործում է իրավաբանական անձի անունից կամ նրա օգտին, կամ
- ☐ փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի անունից կամ օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը, կամ
- ☐ քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, կամ
- ☐ հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, կամ
- ☐ գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

*Տեղեկացված եմ, որ իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ տվյալներ չներկայացնելը, սխալ (այդ թվում կեղծ կամ ոչ արժանահավատ) կամ թերի տվյալներ ներկայացնելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:*

_____ _____
*Ամիս/ամսաթիվ* *Ստորագրություն*

*Հավելված 2*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 144-Ն որոշմամբ*

*Հավելված 2*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշման*

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Սույն կարգով սահմանվում են իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուի վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները:

2. Հավելված 1-ով սահմանված «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց գրանցող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը» (այսուհետ՝ հայտարարություն) իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրավաբանական անձի կողմից ներկայացվում է իրավաբանական անձանց պետական գրանցման, կանոնադրական կապիտալը (բաժնեհավաք կապիտալը և այլն) կամ հիմնադիրների, մասնակիցների, անդամների, փայատերերի, բաժնետերերի կազմը փոփոխելու դեպքում:

3. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված դեպքերում հայտարարությունը ներկայացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ նշված հոդվածներով նախատեսված դիմումը տրամադրելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում թղթային եղանակով:

4. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ հայտարարության մեջ իբրև իրական շահառու կարող է լրացվել այն ֆիզիկական անձը, որը.

1) իրականում գործում է իրավաբանական անձի անունից կամ նրա օգտին, կամ
2) փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի անունից կամ օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը, կամ
3) քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, կամ
4) հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, կամ
5) գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

5. Հայտարարության 1-ին կետում իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից լրացվում է իրավաբանական անձի իրական շահառուի անուն, ազգանունը:

6. Հայտարարության 1-ին կետի «ա»-ից «դ» ենթակետերում իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից լրացվում են իրավաբանական անձի իրական շահառուի ծննդյան ամսաթիվը, բնակության վայրը և քաղաքացիությունը, անձնագրային տվյալները՝ համապատասխան տեղեկատվության առկայության դեպքում:

7. Հայտարարության 1-ին կետի «դ» ենթակետի առնչությամբ տեղեկատվության բացակայության դեպքում՝ իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձն այդ կետում լրացնում է իր անձնագրային տվյալները՝ փակագծում նշելով իր անուն, ազգանունը:

8. Հայտարարության 2-րդ կետում իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից լրացվում է սույն կարգի 4-րդ կետի համաձայն իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքը:

9. Միևնույն իրավաբանական անձին վերաբերող յուրաքանչյուր հայտարարության վրա իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից դրվում է հերթական համար:

10. Երկու կամ ավելի իրական շահառուների առկայության դեպքում հայտարարության մեջ լրացվում են համապատասխան թվով իրական շահառուների տվյալները՝ յուրաքանչյուրի համար օգտագործելով նույն հայտարարության ձևը՝ հերթական համարով:

11. Հայտարարության դարձերեսին պետք է նշված լինեն սույն հավելվածով սահմանված՝ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին*[*]

***Նպատակ ունենալով*** մեղմացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ընթացակարգը,

***հիմք ընդունելով*** «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգ 2-ի 24.1-ին կետում «20» թիվը փոխարինել «18» թվով:
2) Կանոնակարգ 2-ի 24.1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.1 և 1.2 կամ 1.1. և 1.5. կետերի պահանջները միաժամանակ բավարարող պարտատոմսերով արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է 0 տոկոսի չափով:»:

3) Կանոնակարգ 2-ի 24.1.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.1 և 1.4 կամ 1.3 կամ 1.5 կետերի պահանջները բավարարող պարտատոմսերով և Հավելված 11-ի 3-րդ կետով սահմանված արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է սույն կանոնակարգի 24.1 կետով սահմանված դրույքաչափի մեկ ութերորդի չափով:»:

4) Կանոնակարգ 2-ի 24.1.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.2 կամ 1.4 կետերի պահանջները բավարարող պարտատոմսերով և Հավելված 11-ի 2-րդ կետով սահմանված արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է սույն կանոնակարգի 24.1 կետով սահմանված դրույքաչափի մեկ չորրորդի չափով:»:

5) Կանոնակարգ 2-ի 24.1.5 կետն ուժը կորցրած ճանաչել:
6) Կանոնակարգ 2-ի 46-րդ կետի ««դ»» տառը փոխարինել ««բ»» տառով:
7) Կանոնակարգ 2-ի 51-րդ կետում «դրամով» բառից հետո լրացնել «և արտարժույթով» բառերը և հանել երկրորդ և երրորդ նախադասությունները:
8) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 6.31 կետի ««ը»» տառը փոխարինել ««ժա»» տառերով:
9) Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերը ««Միկրո-, Սմոլ էնդ Մեդիում էնթեռփռայզիս Բոնդս էսէյ»-ից (Micro-, Small & Medium Enterprises Bonds SA)» բառերից հետո լրացնել «, «Միգրացիայի միջազգային կազմակերպություն» (International Organization For Migration), «Կառգիլ Ֆայնանշլ Սերվիսիս Ինքերնեյշնլ Ինկ»-ից (Cargill Financial Services International Inc), «Ֆրանկֆուրտ Սքուլ Ֆայնանշլ Սերվիսիս ՋիէմԲիէյջ» (Frankfurt School Financial Services GmbH)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից՝ բացառությամբ 6-րդ և 8-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով խմբագրված 24.1, 24.1.2, 24.1.3, 24.1.4, 24.1.5 կետերի պահանջները կիրառվում են 2016 թվականի հոկտեմբերի 5-ն ընդգրկող և դրան հաջորդող պարտադիր պահուստավորման փաստացի ժամանակահատվածների նկատմամբ:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***22 սեպտեմբերի 2016 թ., N 146-Ն***

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. սեպտեմբերի 20-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.10.2016 թ. (ՀՀՊՏ N21 (564), 17.10.2016):*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին*[*]

***Նպատակ ունենալով*** հստակեցնել փոխանակման կետի գործունեության իրականացման նկատմամբ սահմանված պահանջները,

***հիմք ընդունելով*** «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $7^1$-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 49-րդ հոդվածի 2-րդ մասը,

***ղեկավարվելով*** «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 10) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգ 10-ի 56-րդ կետի 1-ին ենթակետում.
   ա. «հինգ հարյուր քառակուսի մետր» բառերը փոխարինել «վեց հարյուր քառակուսի մետր» բառերով,
   բ. առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.
   «Խանութի առևտրի (սպասարկման) սրահ է համարվում խանութի այն տարածքը, որտեղ ցուցադրված են ապրանքները և ծառայությունները, և հաճախորդը հնարավորություն ունի ընտրություն կատարելու և վճարելու ձեռք բերված ապրանքների և ծառայությունների համար:»,
   գ. «երկու հարյուր քառակուսի մետր» բառերը փոխարինել «չորս հարյուր քառակուսի մետր» բառերով:
2) Կանոնակարգ 10-ի 60-րդ կետում.
   ա. «հինգ հարյուր քառակուսի մետր» բառերը փոխարինել «վեց հարյուր քառակուսի մետր» բառերով,
   բ. «երկու հարյուր քառակուսի մետր» բառերը փոխարինել «չորս հարյուր քառակուսի մետր» բառերով:
3) Կանոնակարգ 10-ի 58-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***27 սեպտեմբերի 2016 թ., N 147-Ն***

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. սեպտեմբերի 20-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.10.2016 թ. (ՀՀԳՏ N21 (564), 17.10.2016):*

*2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին*[*]

***Հիմք ընդունելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 29-ի թիվ 71Ա որոշմամբ հաստատված «ՀՀ արծաթե ներդրումային դրամների թողարկման ծրագիրը»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. 2016 թվականի նոյեմբերի 14-ից շրջանառության մեջ դնել 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***29 սեպտեմբերի 2016 թ., N 151-Ն***

***Հավելված***
***Հաստատված է***
***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի***
***2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 151-Ն որոշմամբ***

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**1. 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.**

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում տեղադրված են «1/4 Oz» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. սեպտեմբերի 27-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.10.2016 թ. (ՀՀԳՏ N21 (564), 17.10.2016):*

5) Դրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 100 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Քաշը | 1/4 տրոյան ունցիա |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տրամագիծը | 20,18 +/- 0,07 մմ |
| Որակը | սովորական |
| Տպաքանակը | մինչև 2.000.000 հատ |

6) 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները







**2. 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը**

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում տեղադրված են «1/2 Oz» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 200 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Քաշը | 1/2 տրոյան ունցիա |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տրամագիծը | 27,66 +/- 0,15 մմ |
| Որակը | սովորական |
| Տպաքանակը | մինչև 2.000.000 հատ |

6) 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները







**3. 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը**

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում տեղադրված են «1 Oz» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 500 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Քաշը | 1 տրոյան ունցիա |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տրամագիծը | 38,60 +/- 0,3 մմ |
| Որակը | սովորական |
| Տպաքանակը | մինչև 8.000.000 հատ |

6) 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները






**4. 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.**

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում տեղադրված են «5 Oz» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Քաշը | 5 տրոյան ունցիա |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տրամագիծը | 60,15 +/- 0,5 |
| Որակը | սովորական |
| Տպաքանակը | մինչև 500.000 հատ |

6) 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները







**5. 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.**

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում տեղադրված են «10 Oz» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 5000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Քաշը | 10 տրոյան ունցիա |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տրամագիծը | 75,50 +/- 0,7 |
| Որակը | սովորական |
| Տպաքանակը | մինչև 500.000 հատ |

6) 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները







**6. 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը**

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում տեղադրված են «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10 000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Քաշը | 1 կգ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տրամագիծը | 100,00 +/- 0,9 |
| Որակը | սովորական |
| Տպաքանակը | մինչև 500.000 հատ |

6) 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները







**7. 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.**

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2017»: Աջ կողմում տեղադրված են «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 20 000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Քաշը | 5 կգ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տրամագիծը | 149,62 +/- 1,2 |
| Որակը | սովորական |
| Տպաքանակը | մինչև 50.000 հատ |

6) 2017 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները






*«Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ը հաստատելու մասին*[*]

***Նպատակ ունենալով*** հստակեցնել ֆինանսական խմբերի կարգավորման նպատակով Կենտրոնական բանկին վերապահված իրավասությունները և ֆինանսական խմբերի կարգավորման մի շարք գործընթացներ,

***հիմք ընդունելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.15-րդ, 39.16-րդ, 39.18-րդ և 39.19-րդ հոդվածները,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով, 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 20/01)՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչված ֆինանսական խմբերը սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից դադարում են ֆինանսական խումբ լինելուց և նրանց նկատմամբ կիրառվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն որոշմամբ սահմանված ֆինանսական խումբ ճանաչելու կարգն ու պայմանները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ին:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***5 հոկտեմբերի 2016 թ., N 157-Ն***

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. սեպտեմբերի 27-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.10.2016 թ. (ՀՀՊՏ N22 (565), 1.11.2016):*

*Հավելված*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 157-Ն որոշմամբ*

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 20/01**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՈՐԱԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

## ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
1) Կազմակերպության և (կամ) Կենտրոնական բանկի կողմից խմբերի բացահայտման ընթացակարգերը և Կենտրոնական բանկի կողմից կազմակերպություններին՝ որպես ֆինանսական խումբ ճանաչելու կարգը,
2) Ֆինանսական խմբի տեսակները,
3) Ֆինանսական խմբի պատասխանատու անձին ներկայացվող չափանիշները, պատասխանատու անձի նշանակման և փոփոխման կարգը,
4) Ֆինանսական խմբի կազմում փոփոխությունների կատարման կարգը, ֆինանսական խմբի տեսակի փոփոխման կարգը,
5) Ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու կարգը,
6) Ֆինանսական խմբի իրական շահառու(ներ)ի, ֆինանսական խմբի հետ փոխկապակցված անձանց, ֆինանսական խմբի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ դրույթներ:

2. Սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով:

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում հայերենով, Յունիկոդ տառատեսակով և «Փի Դի էֆ» ֆորմատով:

4. Կենտրոնական բանկ էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի (միջնորդագրի, դիմում-տեղեկանքի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

| Ֆինանսական խմբի անվանումը | գծիկ | փաստաթղթի տեսակը | գծիկ | Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում) | Գծիկ | ամսաթիվ՝ (օօաաատտ ֆորմատով) | կետ | ընդլայնում |
|---|---|---|---|---|---|---|---|---|

5. Սույն կանոնակարգով սահմանված դրույթները չեն տարածվում սույն կանոնակարգով սահմանված միջազգային ֆինանսական խմբերի նկատմամբ:

6. Սույն կանոնակարգով սահմանված դրույթները տարածվում են Կենտրոնական բանկի կողմից ճանաչված հայկական ֆինանսական խմբերի և միջազգային ֆինանսական խմբերի հայկական խմբերի նկատմամբ:

### ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստներով.
1) ***«Օրենք»***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
2) ***«Կենտրոնական բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
3) ***«Ֆինանսական խումբ»***՝ ըստ Օրենքի 39.15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նշանակության,
4) ***«Ֆինանսական կազմակերպություն»***՝ ըստ Օրենքի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված նշանակության,
5) ***«Պատասխանատու անձ»***՝ ըստ Օրենքի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված նշանակության,
6) ***«Փոխկապակցված անձ»***՝ ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության,

7) ***«Ֆինանսական խմբի իրական շահառու»***՝ ֆինանսական խմբի ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող այն անձինք, որոնց միջոցով այլ անձ(ինք) նշանակալից մասնակցություն ձեռք (չեն) բերում:

## ԲԱԺԻՆ II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԽՄԲԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՐԳԸ

### ԳԼՈՒԽ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՀԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՈՐԱԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Օրենքի 39.15-րդ հոդվածով սահմանված հիմքերի առաջացման դեպքում կազմակերպությունների կողմից առաջարկվող պատասխանատու անձը, իսկ բացակայության դեպքում՝ կազմակերպությունների կողմից լիազորված անձը տվյալ հիմքերն առաջանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում դիմում-տեղեկանք՝ կազմակերպություններին ֆինանսական խումբ ճանաչելու վերաբերյալ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի, եթե Օրենքի 39.15-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության տրամադրման կամ այլ գործընթացների շրջանակներում չի բացահայտվել Կենտրոնական բանկին:

9. Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանումները Օրենքի 39.15-րդ հոդվածով սահմանված կազմակերպությունների խմբին բացահայտելու նպատակով իրականացնում են ուսումնասիրություն՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Կենտրոնական բանկին հասանելի տեղեկատվության ստացման բոլոր միջոցները:

10. Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանումները Օրենքի 39.15-րդ հոդվածով սահմանված կազմակերպությունների խմբին բացահայտելուց հետո գնահատում են ֆինանսական խմբի կառուցվածքով և ֆինանսական խմբի անդամների փոխհարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված խմբային ռիսկերը և Կենտրոնական բանկի խորհրդին են ներկայացնում ֆինանսական խմբի ճանաչման և խմբային ռիսկերի վերաբերյալ եզրակացություն: Ընդ որում՝ խմբային ռիսկերն առկա են, եթե կազմակերպությունը կամ անձը (կազմակերպությունները կամ անձինք) իր մասնակցության ուժով, տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան, ֆինանսական խմբի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթով պայմանավորված կամ օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի ազդելու խմբի անդամ ֆինանսական կազմակերպության (կազմակերպությունների) որոշումների վրա:

11. Կենտրոնական բանկի խորհուրդը, առաջնորդվելով Օրենքի 39.15-րդ հոդվածով և 39.16-րդ հոդվածի 5-րդ մասով ու հիմք ընդունելով Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանումների՝ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված եզրակացությունը, Օրենքի 39.16-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում՝

1) կազմակերպություններին խումբ ճանաչելու վերաբերյալ, եթե առկա են խմբային ռիսկեր, կամ
2) կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ ճանաչելու և խմբային ռիսկերի բացակայության արդյունքում՝ որպես ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու վերաբերյալ:

12. Սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված որոշման մեջ նշում է կատարվում ֆինանսական խմբի և ենթախմբի (առկայության դեպքում) տեսակների վերաբերյալ՝ ըստ սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված դասակարգման չափանիշների:

13. Այն դեպքում, երբ կազմակերպությունների խումբը ֆինանսական խումբ է ճանաչվում առանց սույն կանոնակարգի հավելված 1-ով սահմանված դիմում-տեղեկանքի ներկայացման, ապա ֆինանսական խմբի կողմից առաջարկվող պատասխանատու անձը, իսկ բացակայության դեպքում՝ ֆինանսական խմբի կողմից լիազորված անձը 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում դիմում-տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի:

## ԲԱԺԻՆ III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### ԳԼՈՒԽ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԽՄԲԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

14. Ֆինանսական խմբերը ըստ ռիսկայնության Կենտրոնական բանկի կողմից դասակարգվում են ցածր և ոչ ցածր ռիսկային տեսակների՝ հաշվի առնելով ֆինանսական խմբի ռիսկայնությունը, ֆինանսական խմբի ազդեցությունը ֆինանսական համակարգի և (կամ) տնտեսության վրա:

15. Ֆինանսական խմբերը ըստ խմբում ընդգրկված կազմակերպությունների ռեզիդենտության դասակարգվում են՝

1) ***Հայկական ֆինանսական խումբ***՝ ֆինանսական խումբ, որում ընդգրկված են՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններ և նրանց ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող մայր կազմակերպությունը (առկայության դեպքում), կամ

բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություն(ներ) և նրա (նրանց) օտարերկրյա դուստր ֆինանսական կազմակերպություն(ներ)ը և ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող մայր կազմակերպությունը (առկայության դեպքում),

2) ***Միջազգային ֆինանսական խումբ***՝ ֆինանսական խումբ, որի հիմնական գործունեության վայրը Հայաստանի Հանրապետությունը չէ և որը համախմբված վերահսկվում է այլ կարգավորող և (կամ) վերահսկող մարմնի կողմից,

3) ***Միջազգային ֆինանսական խմբի հայկական ֆինանսական խումբ***՝ միջազգային ֆինանսական խմբի այն մասը, որում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առնվազն երկու ֆինանսական կազմակերպություններ:

16. Հայկական ֆինանսական խմբերի և միջազգային ֆինանսական խմբերի հայկական ֆինանսական խմբերի ֆինանսական կազմակերպությունները համախմբվում և ըստ ֆինանսական խմբում ընդգրկված ֆինանսական կազմակերպությունների տեսակների դասակարգվում են (ընդ որում, տվյալ դասակարգման ընթացքում հայկական ֆինանսական խմբի կամ միջազգային ֆինանսական խմբի հայկական ֆինանսական խմբի անդամ հանդիսացող ոչ ֆինանսական մայր կազմակերպության առկայությունը հաշվի չի առնվում, և տվյալ կազմակերպությունը չի ընդգրկվում ներքոհիշյալ խմբերի կազմում)՝

1) ***Բանկային խումբ***՝ ֆինանսական խումբ, որում ընդգրկված են միայն բանկ(եր) կամ բանկ(եր) և վարկային կազմակերպություն(ներ) և/կամ ներդրումային ընկերություն(ներ),

2) ***Ապահովագրական խումբ***՝ ֆինանսական խումբ, որի կազմում ընդգրկված են միայն ապահովագրական ընկերություններ,

3) ***Վարկային խումբ***՝ ֆինանսական խումբ, որի կազմում ընդգրկված են միայն վարկային կազմակերպություններ,

4) ***Ներդրումային խումբ***՝ ֆինանսական խումբ, որի կազմում ընդգրկված են միայն ներդրումային ընկերություններ կամ ներդրումային ֆոնդի կառավարիչներ կամ միայն ներդրումային ընկերություն(ներ) և ներդրումային ֆոնդի կառավարիչ (ներ),

5) ***Բազմապրոֆիլ խումբ***՝ ֆինանսական խումբ, որը չի բավարարում սույն կետի 1-ից 4-րդ ենթակետով սահմանված ֆինանսական խմբերի դասակարգման պահանջները:

17. Բազմապրոֆիլ խումբը կարող է ընդգրկել՝

1) ***Բանկային ենթախումբ***՝ բազմապրոֆիլ խմբի այն մասը, որի կազմում ընդգրկված են միայն բանկ(եր) կամ բանկ(եր) և վարկային կազմակերպություն(ներ) և/կամ ներդրումային ընկերություն(ներ),

2) ***Ապահովագրական ենթախումբ***՝ բազմապրոֆիլ խմբի կազմում ընդգրկված ենթախումբ, որը կազմված է միայն ապահովագրական ընկերություններից:

## ԲԱԺԻՆ IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ

### ԳԼՈՒԽ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

18. Ֆինանսական խմբի պատասխանատու անձը ֆինանսական խմբի կազմում ընդգրկված այն կազմակերպությունն է, որը

1) կարգավորվում և վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից, և

2) հանդիսանում է մայր ֆինանսական կազմակերպություն, եթե խմբում առկա է այդպիսի կազմակերպություն, իսկ վերջինիս բացակայության կամ Կենտրոնական բանկի կողմից չվերահսկվելու դեպքում՝ խմբի այն ֆինանսական կազմակերպությունն է, որն ունի, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կամ խմբի պնդմամբ, հեղինակություն խմբի անդամների շրջանում, որի շնորհիվ կարող է իրականացնել օրենսդրությամբ սահմանված պատասխանատու անձի պարտականությունները:

### ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. Օրենքի 39.18-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում պատասխանատու անձը նշանակվում է սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված որոշմամբ:

20. Օրենքի 39.18-րդ հոդվածի 3-րդ մասով և 6-րդ մասով սահմանված դեպքերում Կենտրոնական բանկը ֆինանսական խմբի կողմից պատասխանատու անձի թեկնածությունը ստանալուց հետո կամ տվյալ հոդվածով սահմանված ժամկետում սույն կանոնակարգի 18-րդ կետի պահանջներին համապատասխանող թեկնածու չներկայացվելու դեպքում այդ ժամկետից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում պատասխանատու անձի նշանակման վերաբերյալ՝ առաջնորդվելով սույն կանոնակարգի 18-րդ կետով սահմանված պահանջներով:

## ԲԱԺԻՆ V. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՃԱՆԱՉՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՈՐԱԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

### ԳԼՈՒԽ 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

21. Ֆինանսական խմբի կազմում փոփոխություն տեղի ունենալու դեպքում ֆինանսական խմբի պատասխանատու անձը ներկայացնում է այդ փոփոխությունն այն տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի, եթե Կենտրոնական բանկի սահմանած այլ գործընթացների շրջանակում Կենտրոնական բանկը չի տեղեկացվել այդ փոփոխությունների մասին:

22. Ֆինանսական խմբի կազմի փոփոխությամբ պայմանավորված ֆինանսական խմբի (ենթախմբի) տեսակի փոփոխության դեպքում ֆինանսական խմբի կազմի փոփոխության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ նշում է կատարվում ֆինանսական խմբի (ենթախմբի) տեսակի վերաբերյալ՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանման եզրակացությունը՝ հիմնված սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված դասակարգման չափանիշների վրա:

23. Ֆինանսական խմբի կազմի փոփոխությամբ չպայմանավորված ֆինանսական խմբի (ենթախմբի) տեսակի փոփոխության դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆինանսական խմբի տեսակի փոփոխության վերաբերյալ՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանման եզրակացությունը՝ հիմնված սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված դասակարգման չափանիշների վրա:

### ԳԼՈՒԽ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՃԱՆԱՉՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՈՐԱԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

24. Օրենքի 39.15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ֆինանսական խմբի որակման հիմքերի վերացման դեպքում ֆինանսական խմբի պատասխանատու անձը դիմում է Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի, ինչպես նաև ներկայացնելով տվյալ հիմքերի վերացումը հավաստող փաստաթղթեր, եթե Կենտրոնական բանկի սահմանած այլ գործընթացների շրջանակում Կենտրոնական բանկը չի տեղեկացվել այդ փոփոխությունների մասին:

25. Օրենքի 39.15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ֆինանսական խմբի որակման հիմքերի և (կամ) ֆինանսական խմբի կառուցվածքով և ֆինանսական խմբի անդամների փոխհարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված խմբային ռիսկերի վերացման դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում դադարեցնել կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը, կամ որոշում է կայացնում փորձաշրջան տրամադրելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանումների կողմից ներկայացված համապատասխան եզրակացությունը:

26. Սույն կանոնակարգի 25-րդ կետի համաձայն փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի ավարտից հետո 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում տվյալ կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը դադարեցնելու վերաբերյալ կամ որոշում է կայացնում շարունակելու տվյալ կազմակերպություններին դիտարկել որպես ֆինանսական խումբ:

## ԳԼՈՒԽ 9. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ(ՆԵՐ)Ի, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Ֆինանսական խմբերում ընդգրկված ֆինանսական կազմակերպությունների կապիտալներում ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական թույլտվության (այդ թվում՝ ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցության փոփոխության) հարաբերությունները, ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերման մերժման հիմքերը կարգավորվում են՝ ըստ համապատասխան ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի:

28. Այն դեպքում, երբ ֆինանսական խմբում ընդգրկված է վարկային կազմակերպություն, ապա ֆինանսական խումբը ներկայացնում է տվյալ վարկային կազմակերպության անուղղակի նշանակալից մասնակցի (այդ թվում՝ իրական շահառուի) վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 5-ի (իրավաբանական անձի դեպքում) և հավելված 6-ի (ֆիզիկական անձի դեպքում)՝ կազմակերպությունների խմբին ֆինանսական խումբ ճանաչելուց հետո 10-օրյա ժամկետում, ինչպես նաև վարկային կազմակերպության՝ ֆինանսական խմբում գտնվելու ամբողջ ընթացքում, եթե նոր անուղղակի նշանակալից մասնակիցներ (այդ թվում՝ իրական շահառու) են հայտնվել կամ Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը փոփոխվել է:

29. Եթե վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի միջոցով վարկային կազմակերպության կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցության վերաբերյալ սույն կանոնակարգով պահանջվող տեղեկատվությունը ներկայացվում է միայն այն անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ այդ վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

30. Ֆինանսական խմբում ընդգրկված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց, ֆինանսական խմբում ընդգրկված կազմակերպությունների հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց, տվյալ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ պարբերաբար ներկայացվող տեղեկատվության կազմը և ժամկետները սահմանվում են համապատասխան ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերով, ընդ որում, նշված տեղեկատվությունը ներկայացվում է նաև ֆինանսական խմբում ընդգրկված վարկային կազմակերպության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ի 18-րդ գլխի:

***Հավելված 1***

***«Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ի***

**Դիմում-տեղեկանք**

**Կազմակերպությունները ֆինանսական խումբ ճանաչելու վերաբերյալ**

Հարգելի _____

Հայտնում ենք, որ ներքոհիշյալ կազմակերպությունների խումբը բավարարում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 39.15-րդ հոդվածով սահմանված ֆինանսական խմբերի սահմանմանը: Խնդրում ենք քննարկել տվյալ կազմակերպությունների խմբին որպես ֆինանսական խումբ ճանաչելու հնարավորությունը:

☐ Առաջարկում ենք _____ նշանակել ֆինանսական խմբի

*(կազմակերպության անվանումը)*

պատասխանատու անձ: Հավաստիացնում ենք, որ վերջինս կարող է պատշաճ իրականացնել ՀՀ օրենսդրությամբ ֆինանսական խմբի պատասխանատու անձին վերապահված պարտականությունները:

 Խնդրում ենք, որպեսզի Կենտրոնական բանկը ներքոհիշյալ կազմակերպություններից ընտրի ֆինանսական խմբի պատասխանատու անձին:

Առաջարկում ենք նաև կազմակերպությունների խմբին ֆինանսական խումբ ճանաչելու դեպքում ֆինանսական խումբն անվանել _____:

Հավաստիացնում ենք, որ ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:


### 1. Ֆինանսական խմբի վերաբերյալ տեղեկատվություն

1.1. Լրացվում է ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպությունների* վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Կազմակերպության անվանումը | Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը | Կենտրոնական բանկի կողմից չվերահսկվող կազմակերպության գրանցման հասցեն | Կենտրոնական բանկի կողմից չվերահսկվող կազմակերպության գործունեության ոլորտը | Կենտրոնական բանկի կողմից չվերահսկվող կազմակերպության հեռախոսահամարը | Կենտրոնական բանկի կողմից չվերահսկվող կազմակերպության պաշտոնական կայքը | Նկարագրվում են կազմակերպությունների փոխկապակցվածության հիմքերը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

1.2. Գծապատկերի միջոցով ներկայացվում է ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպությունների փոխկապակցվածությունը՝ ըստ առկա հիմքերի.

Օրինակ՝




* *Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությունը կարող է ծանուցմամբ պահանջել նշված անձանց՝ միմյանց միջև կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ծանուցմամբ սահմանված ժամկետում:*

## 2. Ֆինանսական խմբի անդամների հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն

2.1. Լրացվում է ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպությունների հետ փոխկապակցված անձանց* վերաբերյալ տեղեկատվություն.

| Նկարագրվում է ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության փոխկապակցված անձի փոխկապակցության հիմքը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության փոխկապակցված անձի տնօրենների խորհրդի անդամների թիվը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության փոխկապակցված անձի գործադիր մարմնի անդամների թիվը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության փոխկապակցված անձի վերահսկողության տակ գտնվող ընկերությունների թիվը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության փոխկապակցված անձի հեռախոսահամարը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության փոխկապակցված անձի էլեկտրոնային փոստի հասցեն | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության փոխկապակցված անձի կարգավիճակը (ակտիվ, չեղյալ հայտարարված, լուծարման գործընթացում գտնվող, սնանկացած) |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

## 3. Ֆինանսական խմբի անդամների հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն

3.1. Լրացվում է ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպությունների հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց** վերաբերյալ տեղեկատվություն.

| Նկարագրվում է ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության հետ փոխկապակցված անձի կարգավիճակը (ակտիվ, չեղյալ հայտարարված, լուծարման գործընթացում գտնվող, սնանկացած) | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության հետ փոխկապակցված անձի հեռախոսահամարը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության հետ փոխկապակցված անձի գործադիր մարմնի անդամների թիվը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության հետ փոխկապակցված անձի տնօրենների խորհրդի անդամների թիվը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության հետ փոխկապակցված անձի հետ փոխկապակցության հիմքը | Ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության հետ փոխկապակցված անձի էլեկտրոնային փոստի հասցեն | Նկարագրվում է ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպության հետ փոխկապակցված անձի անվանումը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

Կազմակերպությունների կողմից առաջարկվող պատասխանատու անձի կամ այլ լիազորված անձի անվանումը _____

Իրավասու անձի պաշտոնը _____

Անուն, ազգանուն, ստորագրություն _____

---

* *Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությունը կարող է ծանուցմամբ պահանջել ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպությունների և նրանց հետ փոխկապակցված անձանց միջև կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ծանուցմամբ սահմանված ժամկետում:*

** *Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությունը կարող է ծանուցմամբ պահանջել ֆինանսական խմբում ընդգրկման ենթակա կազմակերպությունների և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց միջև կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ծանուցմամբ սահմանված ժամկետում:*

*Հավելված 2*

***«Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ի***

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

**Դիմում-տեղեկանք**

*Ֆինանսական խմբի վերաբերյալ*

Հարգելի _____

Հաշվի առնելով, որ _____

*(ֆինանսական խումբ ճանաչված կազմակերպությունների անվանումները)*

Կենտրոնական բանկի կողմից ճանաչվել են ֆինանսական խումբ, Ձեզ ենք ներկայացնում ներքոհիշյալ առաջարկությունները և տեղեկատվությունը:

☐ Առաջարկում ենք _____ նշանակել ֆինանսական խմբի

*(կազմակերպության անվանումը)*

պատասխանատու անձ: Հավաստիացնում ենք, որ վերջինս կարող է պատշաճ իրականացնել ՀՀ օրենսդրությամբ ֆինանսական խմբի պատասխանատու անձին վերապահված պարտականությունները:

☐ Խնդրում ենք, որպեսզի Կենտրոնական բանկը ներքոհիշյալ կազմակերպություններից ընտրի ֆինանսական խմբի պատասխանատու անձին:

Առաջարկում ենք նաև ճանաչված ֆինանսական խումբն անվանել _____:

Հավաստիացնում ենք, որ ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

**1. Ֆինանսական խմբի անդամների հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն**

1.1. Լրացվում է ֆինանսական խմբի անդամների հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն, եթե տվյալ տեղեկատվությունն այլ գործընթացների շրջանակում չի ներկայացվել Կենտրոնական բանկ, ընդ որում, նախկինում ներկայացված լինելու դեպքում դիմումում նշում է կատարվում այդ մասին, և ներքոհիշյալ աղյուսակը չի ներկայացվում դիմում-տեղեկանքում.

| Ֆինանսական խմբի անդամի և իր հետ փոխկապակցված անձի միջև առկա փոխկապակցվածության հիմքերը | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի գործունեության ոլորտը | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի հեռախոսահամարը | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի գրանցման հասցեն | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի անվանումը, կազմակերպական իրավաբանական ձևը, հարկային ծառայության հաշվառման համարը | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի պետական գրանցման համարը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

**2. Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն**

2.1. Լրացվում է ֆինանսական խմբի անդամների հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն, եթե տվյալ տեղեկատվությունն այլ գործընթացների շրջանակում չի ներկայացվել Կենտրոնական բանկ, ընդ որում, նախկինում ներկայացված լինելու դեպքում դիմումում նշում է կատարվում այդ մասին, և ներքոհիշյալ աղյուսակը չի ներկայացվում դիմում-տեղեկանքում.

| Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի անվանումը կամ անունը, ազգանունը | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի անվանումը կամ անունը, ազգանունը, այն ընդունելիքին, որ տվյալները ներկայացվել են Կենտրոնական բանկ | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի գրանցման հասցեն | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի գործունեության ոլորտը | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի հեռախոսահամարը | Ֆինանսական խմբի անդամի հետ փոխկապակցված անձի էլեկտրոնային փոստի հասցեն | Ընդհանրական բնութագրում է ընկերության գործունեության ոլորտը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Կազմակերպությունների կողմից առաջարկվող պատասխանատու անձի կամ այլ լիազորված անձի անվանումը _____

Իրավասու անձի պաշտոնը _____

Անուն, ազգանուն, ստորագրություն _____

***Հավելված 3***

***«Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ի***

**Դիմում-տեղեկանք**

*Ֆինանսական խմբի կազմի փոփոխությունների վերաբերյալ*

Հարգելի _____

Հայտնում ենք, որ Կենտրոնական բանկի կողմից ճանաչված _____
*(ֆինանսական խմբի անվանումը)*
ֆինանսական խմբի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ:

Մասնավորապես, _____
*(ներկայացվում են կազմում կատարված փոփոխությունը և ֆինանսական խմբի անվան փոփոխությունը (առկայության դեպքում))*
_____ :

Հավաստիացնում ենք, որ ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Պատասխանատու անձի անվանումը _____

Իրավասու անձի պաշտոնը _____

Անուն, ազգանուն, ստորագրություն _____

***Հավելված 4***

***«Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ի***

**Դիմում-տեղեկանք**

*«Ֆինանսական խումբ» որակումը դադարեցնելու վերաբերյալ*

Հարգելի _____

Հայտնում ենք, որ _____ ֆինանսական խումբը
*(ֆինանսական խմբի անվանումը)*
_____ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի
*(դադարել է բավարարել կամ չի բավարարում)*
39.15-րդ հոդվածով սահմանված ֆինանսական խմբերի սահմանմանը:

Խնդրում ենք քննարկել _____ ֆինանսական խմբին որպես «ֆինանսական խումբ» որակումը դադարեցնելու հնարավորությունը:

Հավաստիացնում ենք, որ ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Պատասխանատու անձի անվանումը _____

Իրավասու անձի պաշտոնը _____

Անուն, ազգանուն, ստորագրություն _____

*Հավելված 5*

***«Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ի***

**Տեղեկանք**

*Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերած իրավաբանական անձի վերաբերյալ*

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

Հարգելի _____

Ձեզ ենք ներկայացնում _____ վարկային կազմակերպության կանոնադրական
*(նշվում է վարկային կազմակերպության անվանումը)*
հիմնադրամում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերած անձի վերաբերյալ տեղեկատվություն:

Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Վարկային կազմակերպության կառավարման մարմնի
իրավասու անձի անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____

_____
*(օր, ամիս, տարի)*

| **1. Իրավաբանական անձի տվյալները** | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1.1. Անվանումը _____ | | | | | | |
| 1.2. Գտնվելու վայրը _____ | | | | | | |
| 1.3. Գրանցման ամսաթիվը _____ *(օր/ամիս/տարի)* վայրը _____ համարը _____ | | | | | | |
| **2. Տեղեկություն անուղղակի նշանակալից մասնակցություն ունենալու հիմքերի վերաբերյալ:** | | | | | | |
| **3. Տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի՝ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ:**<br>Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները: | | | | | | |
| 3.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝ | | | | | | |
| Կազմակերպության անվանումը | | Գտնվելու վայրը | | Մասնակցության չափը (դրամով) | | Մասնակցության չափը (%) |
| 1. | | | | | | |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| | | | | | | |
| 3.2. Այլ մասնակցության համար՝ | | | | | | |
| Կազմակերպության անվանումը | | Գտնվելու վայրը | | Մասնակցության չափը (դրամով) | | Մասնակցության չափը (%) |
| 1. | | | | | | |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| | | | | | | |

**4. Տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն և գլխավոր հաշվապահ) վերաբերյալ**
*ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև Կանոնակարգ 13-ի Հավելված 4-ը*

| Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը | | Պաշտոնը | | Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում) |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| | | | | |

**5. Տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի փոխկապակցված անձանց վերաբերյալ**
*Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:*

| Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը | | Գտնվելու (բնակության) վայրը | | Փոխկապակցվածության տեսակը |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |

**6. Տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի մասնակիցների վերաբերյալ**

| Մասնակիցների անվանումը/անունը, ազգանունը | | Մասնակցության չափը (դրամով) | | Մասնակցության չափը (%) |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |

**7. Այլ տեղեկատվություն**

7.1. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր և ավելի ժամկետանց/չմարված պարտավորություններ:

☐ Այո
☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

7.2. Արդյո՞ք կազմակերպության մոտ բացակայում են «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը:

☐ Այո
☐ Ոչ

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

7.3. Արդյո՞ք կազմակերպությունը պատրաստ է վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն:

☐ Այո
☐ Ոչ
☐ Այլ

«Այլ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

7.4. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն:

*Հավելված 6*

***«Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ի***

**Տեղեկանք**

*Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերած ֆիզիկական անձի վերաբերյալ*

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

Հարգելի _____

Ձեզ ենք ներկայացնում _____ վարկային կազմակերպության կանոնադրական
*(նշվում է վարկային կազմակերպության անվանումը)*
հիմնադրամում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերած անձի վերաբերյալ տեղեկատվություն:

Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Վարկային կազմակերպության կառավարման մարմնի
իրավասու անձի անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____

_____
*(օր, ամիս, տարի)*

*Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:*

**1. Ֆիզիկական անձի տվյալները**

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան ամսաթիվը _____
*օր/ամիս/տարի*

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի տվյալները _____

1.7. Հանրային ծառայությունների համարանիշը _____

1.8. Բնակության վայրը
- հաշվառման վայր _____
- փաստացի բնակության վայր _____

1.9. Հեռախոսահամարը _____

1.10. Էլեկտրոնային փոստի հասցեն _____

1.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած բոլոր անունները, ազգանունները, հայրանունները դրանք կրելու ժամանակաշրջանը.

| Անունը, ազգանունը, հայրանունը | Կրելու ժամանակաշրջանը |
|---|---|
| _____ | _____ *(օր/ամիս/տարի)* |

**2. Տեղեկություն անուղղակի ընտանակալից մասնակցություն ունենալու հիմքերի վերաբերյալ:**

**3. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեությունը**

3.1. Կրթություն, որակավորում

| Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, որակավորման անվանումը | Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը | Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը ( _____ թ-ից մինչև _____ թ.) | Ֆակուլտետը | Մասնագիտությունը | Գիտական աստիճանը | Միջազգային որակավորման մակարդակը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

3.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

| Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ | Կազմակերպության անվանում | Գտնվելու վայր | Հեռախոսահամար | Պաշտոն, հիմնական պարտականությունները | Ազատման հիմքերը | Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

**4. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ**:
Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

| Կազմակերպության անվանումը | Գտնվելու վայրը | Մասնակցության չափը (դրամով) | Մասնակցության չափը (%) |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

**5. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ**
*Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն*

| Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը | Գտնվելու (բնակության վայրը) | Փոխկապակցվածության տեսակը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |

*«Ֆինանսական խմբերի տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և հաշվարկման պարբերականությունը» կանոնակարգ 20/02-ը հաստատելու մասին*[*]

***Նպատակ ունենալով*** ֆինանսական խմբերի համար սահմանել հիմնական տնտեսական նորմատիվների կարգավորման շրջանակ,

***հիմք ընդունելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.20-րդ հոդվածը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժթ» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ֆինանսական խմբերի տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և հաշվարկման պարբերականությունը» կանոնակարգ 20/02-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ին:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***5 հոկտեմբերի 2016 թ., N 158-Ն***

***Հավելված***
***Հաստատված է***
***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի***
***2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 158-Ն որոշմամբ***

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 20/02

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն և կարգավորում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ճանաչված՝ ֆինանսական խմբերի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և հաշվարկման պարբերականությունը:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից ոչ ցածր ռիսկային դասակարգված հայկական ֆինանսական խմբերի և միջազգային ֆինանսական խմբերի հայկական ֆինանսական խմբերի վրա:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. սեպտեմբերի 27-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.10.2016 թ. (ՀՀԳՏ N22 (565), 1.11.2016):*

3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***Ֆինանսական խումբ***՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 39.15-րդ հոդվածի 1-ին մասի,

2) ***Կանոնակարգ 20/01***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 157-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01,

3) ***Կանոնակարգ 2***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2,

4) ***Կանոնակարգ 3/02***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02,

5) ***Կանոնակարգ 4/02***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02,

6) ***Կանոնակարգ 10/02***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02,

7) ***Կանոնակարգ 14***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14,

8) ***«Ֆինանսական խմբի (մեկ) փոխառու»***՝

ա. ֆինանսական խմբի առնվազն երկու անդամի նկատմամբ պարտավորություն (ըստ տվյալ անդամի՝ մեկ փոխառուի գծով ռիսկի հաշվարկման մեթոդաբանության) ձևավորած անձը և ֆինանսական խմբի որևէ անդամի նկատմամբ պարտավորություն ունեցող, տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձը (առկայության դեպքում), կամ

բ. ֆինանսական խմբի առնվազն մեկ անդամի նկատմամբ պարտավորություն (ըստ տվյալ անդամի՝ մեկ փոխառուի գծով ռիսկի հաշվարկման մեթոդաբանության) ձևավորած անձը և ֆինանսական խմբի այլ անդամի նկատմամբ պարտավորություն ունեցող, տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձը, ընդ որում, սույն ենթակետի «ա» և «բ» պարբերությամբ սահմանված պարտավորությունը՝ ֆինանսական խմբում ներդրումային ֆոնդի կառավարչի առկայության դեպքում նաև տվյալ ֆոնդի կառավարչի ներդրումային ֆոնդի նկատմամբ ֆինանսական խմբի փոխառուի պարտավորությունն է,

9) ***«Ֆինանսական խմբի հետ կապված անձ»***՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով ֆինանսական խմբի անդամի հետ կապված անձ, որը պարտավորություն ունի ֆինանսական խմբի առնվազն երկու ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ,

10) ***«Խնդրահարույց ներխմբային գործարքներ»***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այն հաշվեկշռային և հետհաշվեկշռային ներխմբային գործարքները, որոնք.

ա. էականորեն վատթարացրել կամ կարող են վատթարացնել գործարքի մի կողմի հիմնական տնտեսական նորմատիվները, և/կամ

բ. կնքվում(ել) են ոչ շուկայական պայմաններով և/կամ

գ. կարող են ոտնահարել ֆինանսական կազմակերպությունների հաճախորդների շահերը,

11) ***«Ոչ շուկայական պայմաններով կնքված գործարքներ»***՝ գործարքներ, որոնք կնքվում են ֆինանսական խմբի անդամի հետ ավելի բարենպաստ պայմաններով, քան միևնույն ժամկետայնության, միանման ռիսկայնությամբ, միանման իրավական կարգավիճակ ունեցող և միևնույն բնագավառում գործող այլ անձանց հետ,

12) ***«ՌԿԱ»***՝ ռիսկով կշռված ակտիվ,
13) Սույն կանոնակարգում կիրառվող ֆինանսական խմբերի և ենթախմբերի տեսակները սահմանված են Կանոնակարգ 20/01-ով,

## ԲԱԺԻՆ II. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

### *ԳԼՈՒԽ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ*

4. Բանկային խումբը և բազմապրոֆիլ խմբի բանկային ենթախումբը հաշվարկում են Կանոնակարգ 2-ով սահմանված տնտեսական նորմատիվները (բացառությամբ Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափի և արտարժույթի տնօրինման նորմատիվների) բանկային խմբի և բանկային ենթախմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Ընդ որում, բանկային խմբի և բանկային ենթախմբի՝ Կանոնակարգ 2-ով սահմանված $Ն3^1$, $Ն3^2$, $Ն4^1$, $Ն4^2$ նորմատիվները հաշվարկվում են սույն կանոնակարգով սահմանված համապատասխանաբար ֆինանսական խմբի (ենթախմբի) փոխառու հանդիսացող անձի (անձանց) և ֆինանսական խմբի (ենթախմբի) հետ կապված անձի (անձանց) նկատմամբ: Բանկային խումբը հաշվարկում է նաև ֆինանսական խմբի խնդրահարույց ներխմբային գործարք(ներ)ի առավելագույն սահմանաչափը՝ սույն կանոնակարգով սահմանված դեպքում և ըստ սույն կանոնակարգով սահմանված հաշվարկման կարգի:

5. Ապահովագրական խումբը և բազմապրոֆիլ խմբի ապահովագրական ենթախումբը հաշվարկում են Կանոնակարգ 3/02-ով սահմանված տնտեսական նորմատիվները (բացառությամբ արտարժույթի տնօրինման նորմատիվի) ապահովագրական խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Ընդ որում, ապահովագրական խմբի և ապահովագրական ենթախմբի՝ Կանոնակարգ 3/02-ով սահմանված Ն5 նորմատիվը հաշվարկվում է սույն կանոնակարգով սահմանված ֆինանսական խմբի մեկ փոխառու հանդիսացող անձանց նկատմամբ: Ապահովագրական խումբը հաշվարկում է նաև ֆինանսական խմբի խնդրահարույց ներխմբային գործարք(ներ)ի առավելագույն սահմանաչափը՝ սույն կանոնակարգով սահմանված դեպքում և ըստ սույն կանոնակարգով սահմանված հաշվարկման կարգի:

6. Վարկային, ներդրումային և բազմապրոֆիլ խմբերը հաշվարկում են հետևյալ տնտեսական նորմատիվները՝

1) Կապիտալի համարժեքության նորմատիվի նվազագույն սահմանաչափը՝ համաձայն սույն կանոնակարգով սահմանված հաշվարկման կարգի,
2) Ֆինանսական խմբի մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը՝ համաձայն սույն կանոնակարգով սահմանված հաշվարկման կարգի,
3) Ֆինանսական խմբի խնդրահարույց ներխմբային գործարք(ներ)ի առավելագույն սահմանաչափը՝ սույն կանոնակարգով սահմանված դեպքում և ըստ սույն կանոնակարգի հաշվարկման կարգի:

### ԳԼՈՒԽ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ

7. Վարկային, ներդրումային և բազմապրոֆիլ ֆինանսական խմբերի կապիտալի համարժեքության նորմատիվի (Ն1 նորմատիվ) նվազագույն սահմանաչափը հաշվարկված ագրեգացման եղանակով սահմանվում է 100 տոկոս:

8. Վարկային, ներդրումային և բազմապրոֆիլ ֆինանսական խմբերի մեկ փոխառուի գծով ռիսկի (Ն2 նորմատիվ) առավելագույն սահմանաչափը սահմանվում է 20 տոկոս:

9. Ֆինանսական խմբի խնդրահարույց ներխմբային գործարք(ներ)ի առավելագույն սահմանաչափը սահմանվում է տվյալ խնդրահարույց գործարք(ներ)ն ակտիվ կամ պայմանական պարտավորություն ճանաչող խմբի անդամի, իսկ ապահովագրության (վերաապահովագրության) դեպքում խմբի անդամ ապահովագրական (վերաապահովագրական) ընկերության ընդհանուր կապիտալի 0%-5% փակ միջակայքում:

Ընդ որում, ներխմբային գործարքները խնդրահարույց են ճանաչվում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից: Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանվում են տվյալ ֆինանսական խմբի խնդրահարույց գործարքների շրջանակը, սահմանաչափերը և դրանց կիրառման ժամկետները: Կենտրոնական բանկը կարող է պահանջել, որպեսզի մարվեն այն խնդրահարույց գործարքները, որոնք իրականացվել և/կամ գործում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացման պահին:

### ԳԼՈՒԽ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Վարկային, ներդրումային և բազմապրոֆիլ ֆինանսական խմբերի ընդհանուր նորմատիվային կապիտալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԸԿ_{խ} = \sum_{i}^{n} ԸԿ_i - Մ$$

*Որտեղ՝*

*$ԸԿ_{խ}$ - Ֆինանսական խմբի ընդհանուր նորմատիվային կապիտալ*

*$ԸԿ_i$ - Ֆինանսական խմբի մեջ մտնող i-րդ ֆինանսական կազմակերպության ընդհանուր նորմատիվային կապիտալն է եռամսյակի միջին ամսական կտրվածքով հաշվարկված*
*Բանկի կամ բանկային ենթախմբի համար Կանոնակարգ 2-ով սահմանված կարգով*
*ապահովագրական (վերաապահովագրական) ընկերության կամ ապահովագրական ենթախմբի համար Կանոնակարգ 3/02-ով սահմանված կարգով*
*վարկային կազմակերպության համար Կանոնակարգ 14-ով սահմանված կարգով*
*ներդրումային ընկերության համար Կանոնակարգ 4/02-ով սահմանված կարգով*
*ներդրումային ֆոնդի կառավարչի համար Կանոնակարգ 10/02-ով սահմանված կարգով*

*Մ - Ֆինանսական խմբի մեջ մտնող կազմակերպությունների՝ խմբի անդամ այլ կազմակերպությունների կապիտալներում մասնակցությունների գումարն է, որը տվյալ կազմակերպության համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանած նորմատիվային դաշտի համաձայն չի նվազեցվել:*

11. Կապիտալի համարժեքության նորմատիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ն1 = \frac{ԸԿ_{խ}}{ԿՊ_{խ}}$$

*Որտեղ՝*

*$ԸԿ_{խ}$ - Ֆինանսական խմբի ընդհանուր նորմատիվային կապիտալ*
*$ԿՊ_{խ}$ - Ֆինանսական խմբի կապիտալի պահանջ*

Խմբի կապիտալի պահանջը հաշվարկվում է՝

$$ԿՊ_{խ} = \sum_{i}^{n} ԿՊ_i$$

*Որտեղ՝*

*$ԿՊ_i$ - Ֆինանսական խմբի անդամ i-րդ կազմակերպության նորմատիվային կապիտալի պահանջն է՝ հաշվարկված եռամսյակի միջին ամսական կտրվածքով:*

Ֆինանսական կազմակերպությունների կապիտալների պահանջները՝

1) Բանկի կամ բանկային ենթախմբի կապիտալի պահանջը հավասար է՝ Ն12/100% x ՌԿԱ-ից և բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափից առավելագույնին: Ն12-ը, բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և ՌԿԱ-ն սահմանված են Կանոնակարգ 2-ով,
2) Ապահովագրական (վերաապահովագրական) ընկերության կամ ապահովագրական ենթախմբի կապիտալի պահանջը հավասար է ՌԿԱ+ՎՊՄ-ից և Ն1.1-ի նվազագույն չափից առավելագույնին: ՌԿԱ-ն, ՎՊՄ-ն և Ն1.1-ը սահմանված են Կանոնակարգ 3/02-ով,
3) Վարկային կազմակերպության կապիտալի պահանջը հավասար է Ն1/100% x ՌԿԱ-ից և վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն չափից առավելագույնին: Ն1-ը, ՌԿԱ-ն և վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանված են Կանոնակարգ 14-ով,
4) Ներդրումային կազմակերպության կապիտալի պահանջը հավասար է Ն1/100% x ՌԿԱ-ից և ներդրումային ընկերության համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափից առավելագույնին: Ն1-ը, ՌԿԱ-ն և ներդրումային ընկերության համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանված են Կանոնակարգ 4/02-ով,
5) Ներդրումային ֆոնդի կառավարիչների կապիտալի պահանջը հավասար է ընդհանուր կապիտալի նվազագույն չափին: Ներդրումային ֆոնդի կառավարիչների ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանված է Կանոնակարգ 10/02-ով:

12. Սույն կանոնակարգի 11-րդ կետի 1-5-րդ ենթակետերի ՌԿԱ-ների հաշվարկներում չեն ընդգրկվում ֆինանսական խմբի անդամ ֆինանսական կազմակերպությունների միջև ներխմբային գործարքները՝ ներառյալ խմբի անդամ այլ ֆինանսական կազմակերպության կապիտալում մասնակցության այն մասը, որը նվազեցվել է ընդհանուր նորմատիվային կապիտալից սույն կանոնակարգի գլուխ 5-ի 10-րդ կետի համաձայն:

13. Վարկային, ներդրումային և բազմապրոֆիլ ֆինանսական խմբերի համար մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը հաշվարկվում է՝

$$Ն2 = \frac{\sum_i Ռ_i + ՌՖ_i}{ԸԿ_{Խ}}$$

*որտեղ՝*

*$ԸԿ_{Խ}$ - Ֆինանսական խմբի ընդհանուր նորմատիվային կապիտալ (հաշվարկված սույն Կանոնակարգի 10-րդ կետի համաձայն)*

*$Ռ_i$- Ֆինանսական խմբի անդամ i-րդ կազմակերպության մեկ փոխառուի գծով ռիսկի չափն է, որը որոշվում է՝*

*բանկի կամ բանկային ենթախմբի համար Կանոնակարգ 2-ով*

*ապահովագրական և վերաապահովագրական ընկերության, ապահովագրական ենթախմբի համար Կանոնակարգ 3/02-ով*

*վարկային կազմակերպության համար Կանոնակարգ 14-ով*

*ներդրումային ընկերության համար ռիսկը ներդրումային ընկերության կողմից իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործառնությունների, արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխման իրականացմամբ, ինչպես նաև փոխառությունների տրամադրմամբ պայմանավորված ներդրումային ընկերության նկատմամբ ծագած դեբիտորական պարտավորությունների գումարն է:*

*$ՌՖ_i$ - Ֆինանսական խմբի անդամ i-րդ կազմակերպության մեկ փոխառուի արժեթղթերում (բանկ փոխառուի դեպքում՝ նաև ավանդներում) ներդրումների չափն է անուղղակիորեն ներդրումային ֆոնդի միջոցով: Այս ցուցանիշը հաշվարկվում է ֆինանսական խմբում ներդրումային ֆոնդի կառավարչի առկայության դեպքում: Այն հավասար է՝*

$$ՌՖ_i = ՄՖ \times ՆՓ$$

*ՄՖ - Ֆինանսական խմբի անդամ i-րդ կազմակերպության ներդրումային ֆոնդում մասնակցության չափ (բացարձակ արժեքով)*

*ՆՓ - Տվյալ ներդրումային ֆոնդի տվյալ փոխառուի արժեթղթերում (բանկի դեպքում՝ նաև ավանդներում) ներդրումներ՝ ֆոնդի ակտիվների նկատմամբ տոկոսային մեծությամբ:*

## ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

14. Ֆինանսական խմբի հիմնական տնտեսական նորմատիվները հաշվարկվում են եռամսյակային կտրվածքով, իսկ

1) ֆինանսական խմբի համար մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի և խնդրահարույց ներխմբային գործարքների առավելագույն չափի նորմատիվները նաև համապատասխանաբար ռիսկերի մեջ ընդգրկվող տարրերի և գործարքների ծագման պահի դրությամբ՝ տվյալ օրվա ընդհանուր կապիտալի նկատմամբ,
2) բանկային խմբի (ենթախմբի) $Ն3^1$, $Ն3^2$, $Ն4^1$, $Ն4^2$ նորմատիվները նաև ռիսկերի մեջ ընդգրկվող տարրերի ծագման պահի դրությամբ՝ տվյալ օրվա ընդհանուր կապիտալի նկատմամբ:
3) ապահովագրական խմբի (ենթախմբի) Ն3 և Ն5 նորմատիվները նաև ռիսկերի մեջ ընդգրկվող տարրերի ծագման պահի դրությամբ՝ տվյալ օրվա ընդհանուր կապիտալի նկատմամբ:

15. Բազմապրոֆիլ խմբի բանկային և/կամ ապահովագրական ենթախմբերը սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն տնտեսական նորմատիվները հաշվարկելուց հետո դրանք ագրեգացնում են բազմապրոֆիլ խմբի այլ անդամների տնտեսական նորմատիվների հետ սույն գլխով սահմանված կարգով:

*«Ֆինանսական խմբերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և դրանց ներկայացման հաճախականությունը» կանոնակարգ 20/03-ը հաստատելու մասին*[*]

***Նպատակ ունենալով*** սահմանել ֆինանսական խմբերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների շրջանակը, կազմման և ներկայացման կարգը,

***հիմք ընդունելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.19-րդ հոդվածի 2-րդ մասը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իա» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ֆինանսական խմբերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և դրանց ներկայացման հաճախականությունը» կանոնակարգ 20/03-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգը հաստատելու մասին» թիվ 87 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ին:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***5 հոկտեմբերի 2016 թ., N 159-Ն***

***Հավելված***
***Հաստատված է***
***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի***
***2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 159-Ն որոշմամբ***

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 20/03

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է՝
1) Ֆինանսական խմբի կողմից ներկայացվող հաշվետվությունների ցանկը
2) Բանկային խմբի, բանկային ենթախմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները
3) Ապահովագրական խմբի և ապահովագրական ենթախմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները
4) Բանկային խմբի, բանկային ենթախմբի արտարժութային դիրքերի վերաբերյալ հաշվետվությունը
5) Ապահովագրական խմբի, ապահովագրական ենթախմբի արտարժութային դիրքերի վերաբերյալ հաշվետվությունը
6) Ֆինանսական խմբերի տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունները

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. սեպտեմբերի 27-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.10.2016 թ. (ՀՀԳՏ N22 (565), 1.11.2016):*

7) Ֆինանսական խմբերի ներխմբային գործարքների վերաբերյալ հաշվետվությունը
8) Ֆինանսական խմբերի կողմից հաշվետվությունների ներկայացման կարգը և ժամկետները
9) Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական խմբից հավելյալ տեղեկություններ պահանջելու կարգը:

2. Սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունների ներկայացման պահանջները տարածվում են Կենտրոնական բանկի կողմից ճանաչված միջազգային ֆինանսական խմբերի հայկական ֆինանսական խմբերի և հայկական ֆինանսական խմբերի վրա:

3. Սույն կանոնակարգով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունները Կենտրոնական բանկի կողմից ցածր ռիսկային դասակարգված ֆինանսական խմբերը չեն ներկայացնում Կենտրոնական բանկ:

## ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սույն կարգում կիրառվող հասկացություններն են՝

1) ***«Մայր կազմակերպություն»***՝ ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի նշանակության,
2) ***«Ֆինանսական խումբը կապող անձ»***՝ ֆիզիկական անձ կամ ոչ ֆինանսական կազմակերպություն կամ ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություն, որի միջոցով ֆինանսական խմբի անդամները համարվել են փոխկապակցված,
3) ***«Ֆինանսական խումբ»***՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով Կենտրոնական բանկի կողմից ճանաչված ֆինանսական խումբ,
4) ***«Պատասխանատու անձ»***՝ ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի նշանակության,
5) ***«Համախմբված ֆինանսական հաշվետվություն»***՝ բանկային խմբի, ապահովագրական խմբի, բանկային ենթախմբի, ապահովագրական ենթախմբի ֆինանսական վիճակի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները,
6) ***«Չվերահսկող բաժնեմաս»***՝

ա. համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ ֆինանսական խմբի անդամ ռեզիդենտ մայր ֆինանսական կազմակերպության առկայության դեպքում

բ. փոխկապակցված ֆինանսական կազմակերպությունների դեպքում, երբ ֆինանսական խմբի անդամ ռեզիդենտ մայր ֆինանսական կազմակերպությունը բացակայում է, ֆինանսական խմբի կապող օղակ հանդիսացող անձի մասնակցությունից և ֆինանսական խմբի անդամների՝ միմյանց միջև մասնակցություններից տարբերվող մասնակցությունը:

7) ***«ՖՀՄՍ»***՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ,
8) ***«Ներխմբային գործարքներ»***՝ ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 39.20-րդ հոդվածի 1-ին մասի նշանակության,
9) Սույն կարգում օգտագործվող ֆինանսական խմբերի և ենթախմբերի տեսակները սահմանված են Կանոնակարգ 20/01-ում:

## ԳԼՈՒԽ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

5. Ֆինանսական խմբի պատասխանատու անձը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում խմբի հետևյալ հաշվետվությունները (որոշակի ֆինանսական խմբի տեսակի համար նախատեսված լինելու դեպքում)՝

1) Բանկային խմբերի (ենթախմբերի), ապահովագրական խմբերի (ենթախմբերի) համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ համաձայն համապատասխանաբար Ձև 1-ի (հավելված 1) և Ձև 2-ի (հավելված 2),
2) Բանկային խմբերի (ենթախմբերի), ապահովագրական խմբերի (ենթախմբերի) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը՝ համապատասխանաբար Ձև 3 (հավելված 3) և Ձև 4 (հավելված 4),
3) Բանկային խմբերի (ենթախմբերի), ապահովագրական խմբերի (ենթախմբերի) արտարժութային դիրքերի վերաբերյալ համախմբված հաշվետվություն՝ Ձև 5 (հավելված 5) և Ձև 6 (հավելված 6),
4) Վարկային, ներդրումային, բազմապրոֆիլ խմբերի ագրեգացման եղանակով հաշվարկված տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը՝ Ձև 7 (հավելված 7),
5) Բանկային խմբերի (ենթախմբերի) նորմատիվների վերաբերյալ հաշվետվություններ՝ համապատասխանաբար Ձև 8 և Ձև 9 (հավելված 8 և հավելված 9),
6) Ապահովագրական խմբերի (ենթախմբերի) նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը՝ Ձև 10 (հավելված 10)
7) Ներխմբային գործարքների վերաբերյալ հաշվետվությունը՝ Ձև 11 (հավելված 11):

### ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ (ԵՆԹԱԽՄԲԵՐԻ), ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (ԵՆԹԱԽՄԲԵՐԻ) ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

6. Բանկային խմբերը (ենթախմբերը), ապահովագրական խմբերը (ենթախմբերը) համախմբում են ֆինանսական կազմակերպությունների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները՝ համաձայն ՖՀՄՍ 10-ով սահմանված համախմբման ընթացակարգերի:

### ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ (ԵՆԹԱԽՄԲԵՐԻ), ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (ԵՆԹԱԽՄԲԵՐԻ) ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. «Արտարժութային դիրքերի վերաբերյալ» հաշվետվությունը՝ Ձև 5-ը, լրացվում է համաձայն «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի ձև թիվ 7 հաշվետվության լրացման մեկնաբանությունների՝ հիմք ընդունելով բանկային խմբի (ենթախմբի) համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տվյալները:

8. «Արտարժութային դիրքերի վերաբերյալ» հաշվետվությունը՝ Ձև 6-ը, լրացվում է համաձայն «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ի ձև թիվ 3 հաշվետվության լրացման մեկնաբանությունների՝ հիմք ընդունելով ապահովագրական խմբի (ենթախմբի) համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տվյալները:

### ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

9. «Ֆինանսական խմբերի ագրեգացման եղանակով հաշվարկված տնտեսական նորմատիվների վերաբերյալ» հաշվետվությունը՝ Ձև 7-ը, ներկայացվում է համաձայն «Ֆինանսական խմբերի տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը» կանոնակարգ 20/02-ով սահմանված կարգի:

10. ***«Բանկային խմբերի (ենթախմբերի)*** նորմատիվների վերաբերյալ» հաշվետվություններում՝ Ձև 8-ում և Ձև 9-ում, ներկայացվում են «Ֆինանսական խմբերի տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը» կանոնակարգ 20/02-ով սահմանված նորմատիվները՝ հիմք ընդունելով համախմբված հաշվետվությունները և առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի»՝ համապատասխանաբար ձև թիվ 3 և ձև թիվ 14 հաշվետվությունների լրացման մեկնաբանություններով:

11. ***«Ապահովագրական խմբերի (ենթախմբերի)*** նորմատիվների վերաբերյալ» հաշվետվությունում՝ Ձև 10-ում, ներկայացվում են «Ֆինանսական խմբերի տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը» կանոնակարգ 20/02-ով սահմանված նորմատիվները՝ հիմք ընդունելով համախմբված հաշվետվությունները և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 370-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ի»՝ Ձև թիվ 3 հաշվետվության լրացման մեկնաբանություններով:

### ԳԼՈՒԽ 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՆԵՐԽՄԲԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

12. «Ֆինանսական խմբերի ներխմբային գործարքների վերաբերյալ հաշվետվություն» Ձև 11-ը կազմված է երկու էջից: Հաշվետվությունում ներկայացվում են այն գործարքները (սույն հաշվետվությունում այսուհետ՝ գործարք կամ գործարքներ), որոնք հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չեն մարվել, և այն գործարքները, որոնք իրականացվել և մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում: Հաշվետվության առաջին էջում ներկայացվում են ֆինանսական խմբի անդամների միջև իրականացված գործարքները: Հաշվետվության երկրորդ էջում ներկայացվում են ֆինանսական խմբի ֆինանսական կազմակերպություն հանդիսացող անդամների և ֆինանսական խմբի անդամ չհանդիսացող և տվյալ խմբի անդամների հետ կապված անձանց միջև գործարքները:

13. Հաշվետվության առաջին էջում լրացվում են հետևյալ սյունակները՝

1) ***«Ֆինանսական խմբի անդամի անվանումը»*** սյունակում լրացվում է ֆինանսական խմբի անդամի անվանումը, որի համար ներկայացվող գործարքն ակտիվային է կամ որի համար գործարքի արդյունքում առաջացել է պայմանական պարտավորություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ «Գործարքի տեսակը» սյունակում լրացվում են «ապահովագրություն» և «վերաապահովագրություն» տարբերակները, որոնց դեպքում տվյալ սյունակում լրացվում է ապահովագրական ընկերության կամ վերաապահովագրական ընկերության անվանումը:
2) ***«Ֆինանսական խմբի անդամի կոդը»*** սյունակում լրացվում է սույն կետի 1-ին ենթակետում սահմանված սյունակում լրացվող ֆինանսական խմբի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրած կոդը: Եթե մայր կազմակերպությունը չունի Կենտրոնական բանկի կողմից տրամա-

դրված կոդ, ապա լրացվում է վերջինիս ՍՎԻՖԹ կոդը կամ ՏԵԼԵՔՍ համարը, իսկ դրանց բացակայության դեպքում լրացվում է հարկային հաշվառման համարը:

3) ***«Ֆինանսական խմբի անդամ-գործընկերոջ անվանումը»*** սյունակում լրացվում է ֆինանսական խմբի անդամի անվանումը, որը սույն կետի 1-ին ենթակետում նշված անձի հետ կատարել է ներկայացվող գործարքը:
4) ***«Ֆինանսական խմբի անդամ-գործընկերոջ կոդը/հարկային հաշվառման համարը»*** սյունակում լրացվում է սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված սյունակում լրացվող ֆինանսական խմբի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրած կոդը: Եթե մայր կազմակերպությունը չունի Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կոդ, ապա լրացվում է վերջինիս ՍՎԻՖԹ կոդը կամ ՏԵԼԵՔՍ համարը, իսկ դրանց բացակայության դեպքում լրացվում է հարկային հաշվառման համարը:
5) ***«Գործարքի կարգավիճակը»*** սյունակում լրացվում է «մարված» կամ «ընթացքում» տարբերակը:

   ա. «մարված» տարբերակը լրացվում է, եթե գործարքը իրականացվել և մարվել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

   բ. «ընթացքում» տարբերակը լրացվում է, եթե գործարքի գծով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա է համախառն հաշվեկշռային մնացորդ:
6) ***«Գործարքի տիպը»*** սյունակում լրացվում է «ակտիվ» կամ «պայմանական պարտավորություն» տարբերակները՝ հիմք ընդունելով սույն կետի 1-ին ենթակետով սահմանված սյունակում լրացվող ֆինանսական խմբի անդամի համար տվյալ գործարքի ակտիվ կամ պայմանական պարտավորություն հանդիսանալու հանգամանքը: Այն դեպքում, երբ գործարքի գծով միաժամանակ առկա է և՛ ակտիվային հոդված, և՛ պայմանական պարտավորություն, ապա սյունակում լրացվում է «ակտիվ» տարբերակը: «Ապահովագրություն» գործարքի դեպքում տվյալ սյունակում լրացվում է «պարտավորություն» տարբերակը:
7) ***«Գործարքի տեսակը»*** ըստ տարբերակների՝ «հաշիվ», «ավանդ», «վարկ», «վարկային գիծ և օվերդրաֆտ», «ռեպո համաձայնագիր», «արժեթուղթ», «լիզինգ», «ֆակտորինգ», «երաշխիք/երաշխավորություն», «ակրեդիտիվ», «փոխառություն», «ապահովագրություն», «վերաապահովագրություն», «ապահովագրական միջնորդություն», «այլ»:
8) ***«Գործարքի բնույթը»*** սյունակում լրացվում է «հավանական խնդրահարույց» կամ «չի կիրառվում» տարբերակը: Սյունակում լրացվում է «հավանական խնդրահարույց», եթե ֆինանսական խմբի գնահատմամբ բավարարվում է Կանոնակարգ 20/02-ի 3-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանված պայմաններից առնվազն մեկը, հակառակ դեպքում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը:
9) ***«Խնդրահարույց ներխմբային գործարք»*** սյունակում լրացվում է «խնդրահարույց» կամ «չի կիրառվում» տարբերակը: Սյունակում լրացվում է «խնդրահարույց» տարբերակը, եթե գործարքը Կենտրոնական բանկի կողմից ճանաչվել է որպես խնդրահարույց ներխմբային գործարք, հակառակ դեպքում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը:
10) ***«Խնդրահարույց ներխմբային գործարքի նորմատիվային սահմանաչափը»*** սյունակում լրացվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներխմբային գործարքների՝ տվյալ տեսակի համար նախատեսված թույլատրելի առավելագույն գումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Սյունակը չի լրացվում, եթե Կենտրոնական բանկի կողմից գործարքը չի ճանաչվել խնդրահարույց:
11) ***«Արժույթի կոդ»*** սյունակում լրացվում է արժույթի կոդը տարադրամների ԻՍՕ (ISO) կոդերի տեսքով:
12) ***«ժամկետայնություն»*** սյունակում լրացվում է գործարքի պայմանագրային ժամկետը՝ ըստ «ցպահանջ», «մինչև 91 օր», «91 օրից 181 օր», «181 օրից 1 տարի», «1-ից 2 տարի», «2-ից 3 տարի», «3-ից 4 տարի», «4-ից 5 տարի», «5-ից 7 տարի», «7-ից 10 տարի», «10-ից 15 տարի», «15 տարուց ավելի», «անժամկետ» տարբերակների:
13) ***«Գործարքի անվանական տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է գործարքի՝ պայմանագրով սահմանված անվանական տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ միջոցները տրամադրվում են անտոկոս, ապա սյունակը չի լրացվում:
14) ***«Գործարքի պայմանագրային գումարը»*** սյունակում լրացվում է գործարքի գծով պայմանագրում սահմանված սկզբնական գումարը, իսկ պայմանագրի երկարաձգման դեպքում՝ սահմանված նոր պայմանագրային գումարը (ապահովագրության/վերաապահովագրության դեպքում՝ ապահովագրավճար/վերաապահովագրավճար): Պայմանագրային գումար սահմանված չլինելու դեպքում սյունակը չի լրացվում:
15) ***«Գործարքի հնարավոր կորուստների պահուստը»*** սյունակում լրացվում է գործարքի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստը (ներառյալ՝ պայմանական պարտավորությունների գծով ձևավորված պահուստը)՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Տվյալ գումարի բացակայության դեպքում սյունակը չի լրացվում:

16) ***«Գործարքի հետհաշվեկշռային մնացորդը»*** սյունակում լրացվում է գործարքի գծով հետհաշվեկշռում գրանցված գումարները (վարկային գծերի դեպքում՝ չօգտագործված մասերը, իսկ ապահովագրության/վերաապահովագրության դեպքում՝ պայմանագրում նշված ապահովագրական գումարը): Տվյալ գումարների բացակայության դեպքում սյունակը չի լրացվում:
17) ***«Գործարքի հաշվեկշռային մնացորդը»*** սյունակում լրացվում է գործարքի հաշվեկշռում գրանցված մնացորդային գումարը՝ ներառյալ հաշվեգրված և չվճարված տոկոսները, տույժերը և տուգանքները, ընդ որում, ապահովագրության և վերաապահովագրության դեպքում նշվում է ՉԱՊ-ի մեծությունը: Տվյալ գումարի բացակայության դեպքում սյունակը չի լրացվում:
18) ***«Գործարքի քանակը»*** սյունակում լրացվում է գործարքների քանակը:
19) Այն դեպքում, երբ սույն կետի 1-ից 13-րդ ենթակետերով սահմանված սյունակներում գործարքների գծով պահանջվող տեղեկատվությունը համընկնում է, ապա սույն կետի 14-ից 18-րդ ենթակետերով սահմանված սյունակներում լրացվում են սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

14. Հաշվետվության երկրորդ էջում սյունակները լրացվում են հետևյալ սկզբունքների համաձայն՝

1) ***«Ֆինանսական խմբի անդամի անվանումը»*** սյունակում լրացվում է ֆինանսական խմբի ֆինանսական կազմակերպություն հանդիսացող անդամի անվանումը, որն իրականացրել է ներկայացվող գործարքը:
2) ***«Ֆինանսական խմբի անդամի կոդը»*** սյունակում լրացվում է սույն կետի 1-ին ենթակետում սահմանված սյունակում լրացվող ֆինանսական խմբի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրած կոդը:
3) ***«Ֆինանսական խմբի անդամի հետ կապված անձի անվանումը, անունը, ազգանունը»*** սյունակում լրացվում է ֆինանսական խմբի անդամներից որևէ մեկի հետ կապված այն անձի անվանումը կամ անունը, ազգանունը, որը սույն կետի 1-ին ենթակետում նշված անձի հետ կատարել է ներկայացվող գործարքը:
4) ***«Ֆինանսական խմբի անդամի հետ կապված անձի կոդը»*** սյունակում լրացվում է սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված սյունակում լրացվող ֆինանսական խմբի անդամի հետ կապված անձի Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կոդը, բացակայության դեպքում՝ ՍՎԻՖԹ կոդը կամ ՏԵԼԵՔՍ համարը, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ հարկային հաշվառման համարը կամ ֆիզիկական անձանց դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը:
5) ***«Կապող անձը»*** սյունակում լրացվում է ֆինանսական խմբի այն անդամի անվանումը, որի հետ կապված է սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված սյունակում ներկայացվող անձը:
6) ***«Կապվածության հիմքը»*** սյունակում լրացվում է «ղեկավար», «փոխկապակցված անձ», «նշանակալից մասնակից», «այլ»:
7) ***«Գործարքի տիպը»*** սյունակում լրացվում է «ակտիվ», «պարտավորություն» կամ «պայմանական պարտավորություն» տարբերակները՝ հիմք ընդունելով ֆինանսական խմբի անդամի համար տվյալ գործարքի ակտիվ, պարտավորություն կամ պայմանական պարտավորություն հանդիսանալու հանգամանքը: Այն դեպքում, երբ գործարքի գծով միաժամանակ առկա է և՛ ակտիվային հոդված, և՛ պայմանական պարտավորության, ապա սյունակում լրացվում է «ակտիվ» տարբերակը:
8) Սույն էջում սահմանված մյուս սյունակները լրացվում են սույն հաշվետվության առաջին էջում սահմանված համապատասխան սյունակների լրացման կարգի համաձայն:
9) Սույն էջում սահմանված ծավալային տվյալները համախմբվում են սույն կանոնակարգի 13-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված սկզբունքների համաձայն:
10) Հաշվետվությունում գումարները լրացվում են հազար դրամներով կետից հետո երեք նիշի ճշտությամբ, իսկ տոկոսադրույքները լրացվում են կետից հետո երկու նիշի ճշտությամբ:

## ԳԼՈՒԽ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

15. Սույն կարգով սահմանված հաշվետվությունները պատասխանատու անձը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում եռամսյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

16. Ֆինանսական խմբի անդամները սույն կանոնակարգով պահանջվող հաշվետվությունների կազմման համար անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է ներկայացնեն ֆինանսական խմբի պատասխանատու անձին:

## ԳԼՈՒԽ 9. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻՑ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերահսկողական նպատակներից ելնելով՝ ֆինանսական խմբից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

18. Ֆինանսական խումբը ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ) ներկայացնում է ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկությունները:

19. Ֆինանսական խմբին ծանուցումը կարող է տրվել հեռախոսի (հեռախոսագրի), Սի-Բի-էյ-նեթ համակարգի կամ կապի՝ սահմանված այլ պահուստային միջոցներով:

20. Ծանուցմամբ Ֆինանսական խմբի լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Կենտրոնական բանկ պարզաբանումներ տալու համար:

21. Ծանուցումը ստորագրվում է Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից:

22. Ծանուցման արդյունքում տրամադրված տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

***Հավելված 1***
***«Ֆինանսական խմբերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և դրանց ներկայացման հաճախականությունը» կանոնակարգ 20/03-ի***

(եռամսյակայինի)
Ձև 1

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

առ __ _____ 20__ թ.

Ֆինանսական խմբի անվանումը
Ֆինանսական խմբի տեսակը
Ֆինանսական խմբի ենթախմբի տեսակը

| | Համախմբված հաշվեկշռի հոդվածներ | (լրացվում է պատասխանատու անձի անվանումը) ցուցանիշները | | (լրացվում է ֆին. խմբի անդամի անվանումը) ցուցանիշները | | (լրացվում է ֆին. խմբի անդամի անվանումը) ցուցանիշները | | Ընդամենը | Կոնսոլիդացված հաշվետվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ցուցանիշը՝ ֆինանսական կազմակերպության հաշվեկշռից | Ցուցանիշը՝ համախմբված ցուցանիշում ընդգրկման համար | Ցուցանիշը՝ ֆինանսական կազմակերպության հաշվեկշռից | Ցուցանիշը՝ համախմբված ցուցանիշում ընդգրկման համար | Ցուցանիշը՝ ֆինանսական կազմակերպության հաշվեկշռից | Ցուցանիշը՝ համախմբված ցուցանիշում ընդգրկման համար | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | n+1 | n+2 | n+3 | n+4 |

**ԿԱՐԳ 1-2 . ԱԿՏԻՎՆԵՐ**
**10 Դրամական ակտիվներ և մնացորդներ կենտրոնական բանկերում**
100 Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր
1000 Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր
101 Թղթակցային և այլ հաշիվներ կենտրոնական բանկերում
1010 Թղթակցային և այլ հաշիվներ կենտրոնական բանկերում

102 Թղթակցային և բանկային հաշիվներ բանկերում
1020 Թղթակցային հաշիվներ բանկերում
1021 Բանկային հաշիվներ բանկերում
103 Թղթակցային և բանկային հաշիվներ կազմակերպության հետ կապված բանկերում
1030 Թղթակցային հաշիվներ կազմակերպության հետ կապված բանկերում
1031 Բանկային հաշիվներ կազմակերպության հետ կապված բանկերում
104 Ավանդներ
1040 Կենտրոնական բանկերում ներդրված ավանդներ
1041 Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ցպահանջ ավանդներ
1042 Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ժամկետային ավանդներ
1043 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններում ներդրված ցպահանջ ավանդներ
1044 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններում ներդրված ժամկետային ավանդներ
1045 Ֆինանսական կազմակերպություններում ներդրված թանկարժեք մետաղներով ավանդներ
1046 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններում ներդրված թանկարժեք մետաղներով ավանդներ

**11 Թանկարժեք մետաղների ձուլակտորներ**
110 Թանկարժեք մետաղների ձուլակտորներ
1100 Բանկային ոսկի
1101 Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ

**12 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**
120 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1200 Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր
1201 Պետական արժեթղթեր
1202 Ոչ պետական արժեթղթեր
1203 Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր
121 Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ
1210 Ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ
1211 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ
122 Ածանցյալ գործիքներ
1220 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ
1221 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ
1222 Հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ
1223 Այլ անձանց հետ կնքված ածանցյալ գործիքներ
123 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ
1230 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով
1231 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով
124 Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1240 Կենտրոնական բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1241 Բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1242 Վարկային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1243 Ներդրումային ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1244 Ապահովագրական ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1245 Այլ ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
125 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1250 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1251 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1252 Հիմնարկներին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1253 Պետական ոչ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1254 Այլ ոչ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր

1255 Ֆիզիկական անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1256 Անհատ ձեռնարկատերերին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
1257 Այլ անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր

126 Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1260 Կենտրոնական բանկերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1261 Բանկերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1262 Վարկային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1263 Ներդրումային ընկերություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1264 Ապահովագրական ընկերություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1265 Այլ ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր

127 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1270 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1271 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1272 Հիմնարկներին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1273 Պետական ոչ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1274 Այլ ոչ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1275 Ֆիզիկական անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1276 Անհատ ձեռնարկատերերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1277 Այլ անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր

128 Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ
1280 Սկզբնական արժեքով չափվող բաժնային արժեթղթեր և փայամասնակցություններ
1281 Սկզբնական արժեքով չափվող ածանցյալ գործիքներ

**13 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ**

130 Արժեթղթեր
1300 Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր
1301 Պետական արժեթղթեր
1302 Ոչ պետական արժեթղթեր
1303 Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր

131 Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ
1310 Ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ
1311 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ

132 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ
1320 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով
1321 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով

133 Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1330 Կենտրոնական բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1331 Բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1332 Վարկային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1333 Ներդրումային ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1334 Ապահովագրական ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1335 Այլ ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր

134 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1340 Պետական առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1341 Այլ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1342 Հիմնարկներին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1343 Պետական ոչ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1344 Այլ ոչ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1345 Ֆիզիկական անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1346 Անհատ ձեռնարկատերերին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր
1347 Այլ անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր

135 Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1350 Կենտրոնական բանկերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1351 Բանկերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր

1352 Վարկային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1353 Ներդրումային ընկերություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1354 Ապահովագրական ընկերություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1355 Այլ ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
136 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1360 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1361 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1362 Հիմնարկներին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1363 Պետական ոչ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1364 Այլ ոչ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1365 Ֆիզիկական անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1366 Անհատ ձեռնարկատերերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1367 Այլ անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
137 Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ
1370 Սկզբնական արժեքով չափվող բաժնային արժեթղթեր և փայամասնակցություններ
1371 Ածանցյալ գործիքներ

**14 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**

140 Արժեթղթեր
1400 Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր
1401 Պետական արժեթղթեր
1402 Ոչ պետական արժեթղթեր
1403 Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր
141 Ֆակտորինգ
1410 Ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգ
1411 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ ֆակտորինգ
1412 Հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ ֆակտորինգ
1413 Այլ անձանց հետ ֆակտորինգ
142 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ
1420 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով
1421 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով
143 Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1430 Կենտրոնական բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1431 Բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1432 Վարկային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1433 Ներդրումային ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1434 Ապահովագրական ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1435 Այլ ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
144 ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1440 Պետական առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1441 Այլ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1442 Հիմնարկներին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1443 Պետական ոչ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1444 Այլ ոչ առևտրային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1445 Ֆիզիկական անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1446 Անհատ ձեռնարկատերերին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
1447 Այլ անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր
145 Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1450 Կենտրոնական բանկերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1451 Բանկերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1452 Վարկային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1453 Ներդրումային ընկերություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1454 Ապահովագրական ընկերություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1455 Այլ ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր

146 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1460 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1461 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1462 Հիմնարկներին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1463 Պետական ոչ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1464 Այլ ոչ առևտրային կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1465 Ֆիզիկական անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1466 Անհատ ձեռնարկատերերին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
1467 Այլ անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր
147 Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ
1470 Սկզբնական արժեքով չափվող բաժնային արժեթղթեր և փայամասնակցություններ
1471 Ածանցյալ գործիքներ

**15 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**

150 Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1500 Բանկերին տրված վարկեր և փոխառություններ
1501 Վարկային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1502 Ներդրումային ընկերություններին տրված վարկեր և փոխառություններ
1503 Ապահովագրական ընկերություններին տրված վարկեր և փոխառություններ
1504 Այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
151 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1510 Կազմակերպության հետ կապված բանկերին տրված վարկեր և փոխառություններ
1511 Կազմակերպության հետ կապված վարկային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1512 Կազմակերպության հետ կապված ներդրումային ընկերություններին տրված վարկեր և փոխառություններ
1513 Կազմակերպության հետ կապված ապահովագրական ընկերություններին տրված վարկեր և փոխառություններ
1514 Կազմակերպության հետ կապված այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
152 Այլ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների գծով
1520 Կարճաժամկետ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ արտարժույթի առքուվաճառքի գծով
1521 Կարճաժամկետ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ այլ հաշվարկների գծով
1522 Դեպոնացված միջոցներ
153 Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով
1530 Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով
1531 Վարկերի հնարավոր կորուստների պահուստ կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպությունների գծով

**16 Պահանջներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ**

160 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1600 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1601 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
161 Հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1610 Հիմնարկներին տրված վարկեր և փոխառություններ
1611 Պետական ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1612 Այլ ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
162 Այլ անձանց տրված վարկեր և փոխառություններ
1620 Ֆիզիկական անձանց տրված վարկեր և փոխառություններ
1621 Անհատ ձեռնարկատերերին տրված վարկեր և փոխառություններ
1622 Կազմակերպության աշխատակիցներին տրված վարկեր և փոխառություններ
1623 Այլ անձանց տրված վարկեր և փոխառություններ
163 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1630 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1631 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
164 Կազմակերպության հետ կապված հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1640 Կազմակերպության հետ կապված հիմնարկներին տրված վարկեր և փոխառություններ
1641 Կազմակերպության հետ կապված պետական ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
1642 Կազմակերպության հետ կապված այլ ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ
165 Կազմակերպության հետ կապված այլ անձանց տրված վարկեր և փոխառություններ
1650 Կազմակերպության հետ կապված ֆիզիկական անձանց տրված վարկեր և փոխառություններ

1651 Կազմակերպության հետ կապված անհատ ձեռնարկատերերին տրված վարկեր և փոխառություններ
1652 Կազմակերպության հետ կապված այլ անձանց տրված վարկեր և փոխառություններ
166 Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով
1660 Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով
1661 Վարկերի հնարավոր կորուստների պահուստ կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով

**17 Ռեպո համաձայնագրեր**

170 Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ
1700 Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ
171 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ
1710 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ
172 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ
1720 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ
1721 Ռեպո համաձայնագրեր հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ
1722 Ռեպո համաձայնագրեր այլ անձանց հետ

**18 Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ**

180 Ակրեդիտիվներ
1800 Ֆինանսական կազմակերպություններին տրված ակրեդիտիվներ
1801 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններին տրված ակրեդիտիվներ
1802 Հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին տրված ակրեդիտիվներ
1803 Այլ անձանց տրված ակրեդիտիվներ
181 Երաշխիքներ և երաշխավորություններ
1810 Երաշխիքներ և երաշխավորություններ ֆինանսական կազմակերպությունների համար
1811 Երաշխիքներ և երաշխավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների համար
1812 Երաշխիքներ և երաշխավորություններ հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների համար
1813 Երաշխիքներ և երաշխավորություններ այլ անձանց համար
182 Ֆինանսական վարձակալություն
1820 Ֆինանսական կազմակերպություններից ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ
1821 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ
1822 Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություններից
1823 Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից
183 Արժեթղթերի փաթեթի կառավարում
1830 Ֆինանսական կազմակերպություններից արժեթղթերի փաթեթի կառավարման գծով ստացվելիք գումարներ
1831 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից արժեթղթերի փաթեթի կառավարման գծով ստացվելիք գումարներ
184 Արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարներ
1840 Ֆինանսական կազմակերպություններից արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարներ
1841 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարներ
1842 Ֆինանսական կազմակերպություններից արժեթղթերի տեղաբաշխման գծով ստացվելիք գումարներ
1843 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող արժեթղթերի տեղաբաշխման գծով ստացվելիք գումարներ
1844 Ֆինանսական կազմակերպություններից այլ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ
1845 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից արժեթղթերի այլ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ
185 Արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումարներ
1850 Ֆինանսական կազմակերպություններից արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումարներ
1851 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումարներ
186 Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ
1860 Ֆինանսական կազմակերպություններից ներդրումային ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ
1861 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներդրումային ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ
1862 Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով կառավարիչների կողմից ստացվելիք պարգևավճարներ
187 Խորհրդատվության գծով ստացվելիք գումարներ
1870 Ֆինանսական կազմակերպություններից մատուցած խորհրդատվության գծով ստացվելիք գումարներ
1871 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող մատուցած խորհրդատվության գծով ստացվելիք գումարներ

188 Հեջավորման գործիքներ
1880 Հեջավորման ածանցյալ գործիքներ (իրական արժեքի հեջ)
1881 Հեջավորման ածանցյալ գործիքներ (դրամական հոսքի հեջ)
1882 Հեջավորման այլ գործիքներ
189 Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև
1890 Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև

**19 Ստացվելիք գումարներ**

190 Դեբիտորական պարտքեր
1900 Դեբիտորական պարտքեր
191 Կանխավճարներ
1910 Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին
1911 Կանխավճարներ և գերավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով
1912 Ապագա ժամանակաշրջանի ծախսեր
192 Ստացվելիք շահաբաժիններ ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից
1920 Ասոցիացված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
1921 Դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
1922 Համատեղ վերահսկվող միավորումներում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
193 Ստացվելիք այլ գումարներ
1931 Ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք այլ գումարներ
1932 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացվելիք այլ տոկոսներ և միջնորդավճարներ
1933 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացվելիք այլ գումարներ
194 Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ
1940 Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

**20 Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ**

200 Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ
2000 Ասոցիացված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ
2001 Դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ
2002 Համատեղ վերահսկվող միավորներում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ
201 Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ինքնարժեքով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ
2010 Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ինքնարժեքով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ

**21 Հիմնական միջոցներ**

210 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ
2100 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ
2101 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածություն
2102 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեզրկում
211 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ
2110 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ
2111 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածություն
2112 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների արժեզրկում

**22 Ոչ նյութական ակտիվներ**

220 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2200 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2201 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա
2202 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների արժեզրկում
221 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2210 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2211 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիա
2212 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկում
222 Շահագործման մեջ գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2220 Շահագործման մեջ գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2221 Շահագործման մեջ գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվների արժեզրկում
223 Շահագործումից դուրս գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2230 Շահագործումից դուրս գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ
2231 Շահագործումից դուրս գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկում

**23 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ**

230 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

2300 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

**24 Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում**

240 Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում

2400 Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում

241 Կապիտալ ներդրումներ կազմակերպության ոչ նյութական ակտիվներում

2410 Կապիտալ ներդրումներ կազմակերպության ոչ նյութական ակտիվներում

242 Կապիտալ ներդրումներ կազմակերպության վարձակալված հիմնական միջոցներում

2420 Կապիտալ ներդրումներ կազմակերպության վարձակալված հիմնական միջոցներում

2421 Վարձակալված հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների մաշվածություն

**25 Այլ ակտիվներ**

250 Պաշարներ

2500 Արագամաշ առարկաներ

2501 Այլ պաշարներ

251 Թանկարժեք քարեր

2510 Թանկարժեք քարեր

252 Հուշադրամներ

2520 Հուշադրամներ

253 Բռնագանձված գրավ

2530 Բռնագանձված գրավ

254 Սառեցված հաշիվներ

2540 Սառեցված հաշիվներ

255 Հետաձգված հարկային ակտիվներ

2550 Հետաձգված հարկային ակտիվներ

256 Ներդրումային գույք

2560 Ներդրումային գույք

257 Հաշվարկված տույժեր և տուգանքներ

2570 Հաշվարկված տույժեր և տուգանքներ

258 Այլ ակտիվներ

2580 Այլ ակտիվներ

Գուդվիլ

Ընդամենը ակտիվներ

**ԿԱՐԳ 3-4. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**30 Թղթակցային և բանկային հաշիվներ**

300 Թղթակցային և բանկային հաշիվներ

3000 Բանկերի թղթակցային հաշիվներ

3001 Ֆինանսական կազմակերպությունների բանկային հաշիվներ

3002 Ֆինանսական կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

301 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպությունների թղթակցային և բանկային հաշիվներ

3010 Բանկի հետ կապված բանկերի թղթակցային հաշիվներ

3011 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպությունների բանկային հաշիվներ

3012 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

302 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց բանկային հաշիվներ

